

## Խմբագրական

### ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅԵՐԹԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԳՐԱԻԱԿԱՆԸ ՄԵՍՐՈՊԱՇՈՒՆՉ ՀԱՅ ԴՊՐՈՅՆ Է



«Սփիւռքի մէջ Հայ Դպրոց փակելը համազօր է Հայաստանի մէջ հայ բանակի զօրանց մը փակելուն»։ Երուանդ Յ. Քասունի

Կրթական տարեվերջի այս օրերուն, մեր միտքերու լուսարծակը կ'ուղղենք հայ դպրոցին, ուրկէ հայ շրջանաւարտները՝ ազգային ոգիով թրծուած, կ'ընծայուին հայ կեանքին՝ Հայաստանէն մինչեւ Սփիւռքի ամէնէն հեռաւոր գաղութները..., թէեւ թագածահրի այս տագնապալից օրերուն, անոնք զրկուած պիտի ըլլան Շրջանաւարտից Ամավերջի լիարժէք հանդիսութիւններէն, որոնք գեղեցիկ եզրափակումս

են եւ պսակումը իրենց տարիներու տքնաջան աշխատանքին:

Ի՛նչ ալ ըլլան պարագաները, սակայն, հայ դպրոցէն շրջանաւարտներու այս աստղաբոյլն է, գերազանցօրէն, որ պիտի ստանձնէ պատասխանատուութիւնը յետագային՝ ղեկավարելու հայ կեանքը ամէնուրեք, նոր շունչ ու ոգի փոխանցելու ազգային մեր կառոյցներուն, նոր թափ տալու ազգային-հայրենական մեր գոյերթին, զինուած ըլլալով հայոց լեզուի ու պատմութեան իմացութեամբ ու շունչով, հայ հոգեմտաւոր արժէքներով եւ ազգային գիտակցութեամբ ու ոգիով...

Ահա թէ ինչո՞ւ Էական, Նոյնիսկ ճակատագրական է հայ դպրոցին ջամբած հայեցի, Մեսրոպաշունչ դաստիարակութիւնը, քանզի անիկա է որ կը պայմանաւորէ ազգի ու հայրենիքի ապագայ ուղին, անոր յառաջընթացը պատմութեան մէջ...

Եթէ ակնարկ մը նետենք հայոց պատմութեան էջերուն, պիտի տեսնենք որ Մաշտոցեան կամ Մեսրոպահիմն դպրոցն էր, որ դարբնեց ազգային քաղաքական մեր ռազմավարութիւնը, երաշխաւորեց հայ գիր ու գրականութեան, հայ մամուլի, հայեցի ինքնութեան, գոյութեան եւ յարատեւման պայքարի մեր երթը դար ու դարեր:

Ներկայիս, համաշխարհայնացման մեր դարուն ի մասնաւորի, ուր այնքան հեշտօրէն կը ձուլուին ազգային լեզու եւ մշակոյթ, աւանդոյթ եւ հոգեւոր-բարոյական արժէքներ, պատմութիւն ու ազգային ոգի՝ զանգուածային համահարթեցման հսկայ ձուլարանին մէջ,



ճակատագրական հրամայական է նոր որակ ու մակարդակ տալ հայ դպրոցին, նոր ուժականութիւն հաղորդել անոր:

Կը խօսինք ու կը գրենք մեր մեծ Երագին ու Պահանջատիրութեան մասին, բռնագրաւուած հայրենի հողին ազատագրութեան մասին, բայց միաժամանակ կը նահանջենք օտարացումի զառիթափն ի վար, կը փակենք հայ դպրոցները մէկը միւսին ետեւէն, հազար պատրուակ յօրինելով, որոնց ամէնէն անընդունելի ճշմարտագանցութիւնը՝ «Հայերէնը Էական չէ հայ զգալու համար» խօսքն է նետուած ասդին-անդին՝ հայ յորջորջուած ղեկավարներու բերնով... Ի դէպ, այսօր փակուած հայկական վաժարաններու թիւը հասած է 227-ի, ըստ հաւաստի աղբիւրներու:

Կայ արդեօ՞ք կամ կրնա՞նք ունենալ ազգային քաղաքական ռազմավարութիւն, Պահանջատիրութիւն՝ Տարագիր հայութեան համար, առանց հայ դպրոցին, առանց Հայ մալու, Հայ՝ լեզուով, գիրով, գրականութեամբ, հաւատքով...

Մեսրոպաշունչ ՀԱՅ ԴՊՐՈՑՆ Է գերագոյն գրաւականը ազգային գաղափարախօսութեան եւ ռազմավարութեան, մեր Պահանջատիրութեան, մեր մեծ Երագի իրականացման ճամբուն վրայ:

Ազգային օրակարգի հարցերու հարցը ըլլալու է, հետեւաբար, թէ մեր կրթական համակարգը՝ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ, ի՞նչ տեսակ հայ մարդ ու քաղաքացի պիտի միտի պատրաստել.-

-Կրաւորական, յարմարող ու համակերպող, ուրիշներուն օգնութեան ապաւինող հայ մարդը, թէ՞ նախաձեռնող ու ստեղծագործ, պայքարի կամքով օժտուած, իր ժողովուրդի ու հայրենիքի ազատագրութեան ու վերելքին համար մաքառելու ընդունակ յառաջապահ մարտիկը...

-Գիտելիքներ սոսկ ամբարող մարդ-մեքենա՞յ, թէ՞ ստեղծագործական միտքով դատելու ընդունակ, հարցերը քննական մտածողութեամբ եւ վերլուծական միտքով ընկալող, ընկալեալ կաղապարներէ դուրս մտածելու ընդունակ հարցադրող, կշռադատող միտքով օժտուած հայ մարդը...

-Կոշկոռ կապած նախապաշարուններով եւ հատուածական սին ու նեղմիտ մտածողութեամբ կաղապարուած ու քարացած հայ մարդը, թէ՞ լայնահորիզոն եւ համահայկական տեսլականով թրծուած ազատ հայը...

Ի վերջոյ, ժողովուրդի մը մեծագոյն հարստութիւնը՝ իր երկրի աշխարհագրական դիրքէն, բնական պաշարներէն եւ տնտեսական հնարաւորութիւններէն աւելի ու գերիվեր՝ անոր ՄԱՐԴՈՅԺԻ որակն է: Մարդոյժ՝ որ օժտուած ըլլայ յառաջապահ գաղափարներով ու



մտածողութեամբ, կազմաւորուած ըլլայ մարդկային եւ ազգային բարձրագոյն արժէքներով, իրաւ հայրենասիրութեամբ եւ կազմակերպչական կարողութեամբ, զինուած ըլլայ գիտելիքներով, ստեղծագործական միտքով, այլեւ յանդուգն կամքի ոյժով...

Այս հարցադրումները եւ անոնց տրուելիք պատասխանները երիցս կարելոր են ու նշանակալից մեր ժողովուրդին եւ հայոց հայրենիքին համար: Բնական պաշարներէ զուրկ, աշխարհաբաղաբական իր խոցելի դիրքով Հայաստանի Հանրապետութեան եւ մասնաւորաբար՝ իրաւագրկուած, մասնատուած եւ կոտորակուած Սփիւռքի տարագիր մեր ժողովուրդին համար, որ կ'ապրի խառնաշփոթ ժամանակներու ճգնաժամին մէջ՝ ուղեկորոյս եւ ուղեմուտք...

ՀԱՅ ԴՊՐՈՑԸ պարտի կազմաւորել սերունդ մը՝ որ ունենայ ազգային բարձր գիտակցութիւն, հաղորդ մեր մշակոյթի արժէքներուն, ականջալուր մեր պատմութեան ձայնին, ստեղծագործական եւ քննական միտքով օժտուած, համահայկական ոգիով ամրապինդ, որ յանձնառու ըլլայ ՏԵՐՆ ու ՊԱՀԱՆՁԱՏԵՐԸ ըլլալու ազգային մեր բռնախլուած իրաւունքներուն, ՀՈՂԻՆ, եւ զարգացման նոր ուղղութիւն մը հունաւորէ՝ 21-րդ դարու բարդ եւ խառնիճաղանճ ժամանակներուն:

Նման դաստիարակութեամբ թրծուած սերունդն է մեր վաղուան յոյսն ու ապագան: Իսկ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ անոր միակ եւ անփոխարինելի ԴԱՐԲՆՈՑԸ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Հարցազրոյց

### «Մենք իրար լաւ չենք ճանաչում. Սփիւռքի ներուժի հաւանաբար հինգ տոկոսը չենք օգտագործել»



«Առաջին լրատուական»-ի գրուցակիցն Է «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ և գլխաւոր խմբագիր Յարութ Սասունեանը:

– Պարոն Սասունեան, օրերս նախագահ Արմեն Սարգսեանը իր հարցազրոյցում ֆենոմենալ(երեւոյթի համազօր) Է որակել հայկական սփիւռքը՝ նշելով, որ սփիւռքահայերի ներուժը, յատկապէս նրանց գիտելիքներն ու փորձն առաւել արդիւնաւէտ

օգտագործելու համար անհրաժեշտ Է ինստիտուցիոնալ (հաստատութեանական) մօտեցում ունենալ՝ օրենսդրական և գործնական միջոցառումների համադրմամբ, որոնք ուղղուած կը լինեն նրանց մասնակցութեան ընդլայնմանը հասարակական, քաղաքական կեանքում և յատկապէս՝ երկրի մշակութային և տնտեսական զարգացման մէջ: Ինչպէ՞ս էք գնահատում այս յայտարարութիւնը:

– Սա մի թեմա է, որին ես շատ մօտիկից ծանօթ եմ և երկար տարիներ աշխատել եմ դրա վրայ: Ասեմ, որ նախագահի դիտարկմանը, որ պէտք է սփիւռքի ներուժն աւելի լաւ օգտագործել, լիովին համաձայն եմ, որովհետեւ անկախութեան 30 տարիների ընթացքում սփիւռքի ներուժի հաւանաբար հինգ տոկոսը չենք օգտագործել: Բացի այդ, երբ «սփիւռք» բառն օգտագործում ենք, դա շատ ընդհանրական բառ է, ունի շատ իմաստներ: Սփիւռքը բազմաշերտ է, որտեղ կան ամեն տեսակի մարդիկ, անհատներ, համայնքներ: Դրանք բաւական տարբեր են իրարից՝ իրենց պատմութեամբ, և հնարաւոր չէ խօսել միայն սփիւռքի մասին, պէտք է խօսենք սփիւռքների մասին: Իսկ վերջին 40-50 տարիների ընթացքում Հայաստանից շատ հայեր են արտագաղթել աշխարհի չորս կողմը: Սփիւռքի վերջին շերտն է, որը լիովին տարբեր է աւանդական սփիւռքից: Եւ այս բոլոր տարբերութիւնները պէտք է հաշուի առնել: Հիմա մենք ունենք սփիւռքի գործերի յանձնակատար, որը թեւէ վերջերս չի կարողանում ճամբորդել, բայց մինչ այդ տարբեր հանդիպումներ ունեցաւ սփիւռքի ներկայացուցիչների հետ: Պէտք է ասել, որ սա շատ բարդ աշխատանք է: Գալով Արմեն Սարգսեանի առաջարկներին՝ այո, համաձայն եմ, որ պէտք է ինստիտուցիոնալ(հաստատութեանական) լինի, բայց տարբեր մարդիկ դա հասկանում են տարբեր իմաստով: Ինստիտուցիոնալ ասածը նախ պէտք է բացատրել, կան տարբեր տարբերակներ: Օրինակ՝ այդ ինստիտուցիոնալ կառոյցը ով՞ պէտք է ձեւաւորի: Կա երկու կարծիք. մէկը այն է, որ Հայաստանի կառավարութիւնը ինքը նախաձեռնի սփիւռքի կառոյցի կազմակերպումը, նաեւ կայ այլ կարծիք, որ սփիւռքահայերն իրենք պէտք է կազմակերպեն իրենց: Ես աւելի համամիտ եմ երկրորդ տարբերակին, որովհետեւ սփիւռքը բաւականին տարբեր է Հայաստանից, և Հայաստանի կառավարութիւնն արդէն իսկ աշխատանք ունի Հայաստանի ժողովրդին ղեկավարելու, կառավարելու, ինչը շատ աւելի դժուար գործ է, որ դեռ կարողանայ սփիւռքը ղեկավարել և հասկանալ սփիւռքի հարցերը: Մենք կարծում ենք, որ իրար



լաւ ենք հասկանում, սակայն իրականում լավ չենք ճանաչում իրար: Անշուշտ կան մի քանի բացառութիւններ, բայց այդ բացառութիւնները շատ քիչ թիւ են կազմում: Սփիւռքի մեծ մասը Հայաստանին լաւ չի ճանաչում, և Հայաստանն էլ սփիւռքին լաւ չի ճանաչում, և եթէ սփիւռքը փորձի Հայաստանը ղեկավարել, չի յաջողուի, կամ եթէ Հայաստանը փորձի սփիւռքը ղեկավարել, էլի չի յաջողուի: Ուրեմն Հայաստանի ժողովուրդը պետք է կառավարի Հայաստանը, և սփիւռքը պետք է ղեկավարի սփիւռքը:

– Կարո՞ղ ենք արձանագրել, որ Հայաստանի Նորագոյն պատմութեան որեւէ իշխանութիւն առաջնահերթութիւն չի դիտարկել սփիւռքը և բաւարար քայլեր չի արել այդ ուղղութեամբ:

– Անշուշտ, չի կարելի ասել, որ որեւէ քայլ չի արել, որոշ քայլեր արուել են: Վերջին տասը տարիներին ունեինք սփիւռքի նախարարութիւն, դա նշանակում էր, որ կառավարութիւնը կարելորութիւն էր տուել սփիւռքին և նախարարութիւն էր ձեւաւորել: Կարող ենք վիճել՝ որքանով էր այդ նախարարութիւնը օգտակար և արդիւնաւետ էր իր աշխատանքներով, բայց որոշ փորձեր եղել են: Եւ հիմա վերջին կառավարութիւնը սփիւռքի յանձնակատարի պաշտօնում փորձում է իր մօտեցումով սփիւռքի հարցերով զբաղուել: Ես այն կարծիքին եմ, որ պետք է նախարարութիւն լինէր և ոչ յանձնակատար: Եւ եթէ նախարարութիւնը լաւ չէր աշխատել, պետք էր Նոր ուժերով, Նոր ծրագրերով անելի լաւ աշխատել: Ես միշտ ասում եմ, որ եթէ պաշտպանութեան նախարարութիւնը լաւ չի աշխատել, դա չի նշանակում, որ պետք է փակել պաշտպանութեան նախարարութիւնը, դա նշանակում է, որ պետք է բարելաւել, Նոյնը սփիւռքի նախարարութեան հետ կապուած. եթէ նախարարութիւնն իրեն չէր արդարացրել, պետք էր բարելաւել այն:

– Նախագահը նաեւ նշել է՝ մեր առաքելութիւնը հասկանալի է՝ ուժեղ պետութեան միջոցով հասնել ազգի ցանցային մոդելի: Ցանցային մոդել ունենալու գաղափարը որքանով է իրատեսական:

– Անշուշտ, եթէ պետք է կազմակերպուի, պետք է կազմակերպութիւնը հիմնուի ցանցերի վրայ, և ամէն ինչ պետք է ծրագրաւորուի, որպէսզի սահուն ընթանայ: Եւ պետք է յստակ ծրագիր լինի. ես դեմ չեմ, որ մենք հանդիպենք և տարբեր գաղափարներ առաջարկենք, իրար հետ վիճենք, բայց վերջնարդիւնքում պետք է եզրակացութեան գանք: Եւ պետք է քուէարկութեան դրուի, և դեմոկրատիկ (ժողովրդավարական» ձեւով եզրակացութեան հասնենք:

Վերջին երեսուն տարիներին, դժբախտաբար, ինչպէս բոլորն են ասում, Հայաստանի կառավարութիւնը սփիւռքին նայել է որպէս կթան կով, և միայն մտածել են փողի և եկամուտի մասին, թէ ինչպէս փող ստանան սփիւռքից: Փողը, իհարկէ, կարելոր է, բայց շատ անելի կարելոր է սփիւռքի մասնագետների ներուժը: Հայաստանն ունի այդ մասնագետների կարիքը, և Փաշինեանն էլ խօսում է դրա մասին, պետք է որոշ օրէնքներ փոխուեն, բայց որեւէ առաջընթաց այդ ուղղութեամբ չի երեւում: Սփիւռքի երրորդ կարելոր ներուժն այն է, որ սփիւռքահայերը ապրում են 100 երկրների մէջ և աշխատում են օտար երկրներում ու ունեն տեղացի հարեաններ, ընկերներ, և նրանք էլ ունեն բաւականաչափ ներուժ և մասնագիտութիւն. սփիւռքահայերը կարող են օտարներին ներգրաւել և նրանց ծանօթացնել Հայաստանը, իրենց հետ Հայաստան բերել և օգնել, որ նրանք էլ մասնակցեն Հայաստանում ներդրումներ անելուն, և նաեւ նրանց մասնագիտութիւններով օգտակար լինել: Այսինքն՝ միայն հայերը չէ, որ կարող են օգնել Հայաստանին, կարող են նաև օտարներին ներգրաւել մեր աշխատանքներում:



---

Հարցազրոյցը վարած է Սիրանոյշ Պապեանը

## Յօդուածներ

### Ա.- Արեւելահայերէնն ու Արեւմտահայերէնը Հայ Ժողովուրդի Պատմական Ճակատգիրն Են

#### Ա. -Մենք Ենք Մեր Լեզուին Ճակատագիրը Որոշողը



Լեզուագիտութեան մէջ ընդունուած տեսակետ մըն է, թէ լեզուին բոլոր յատկութիւնները կը կրեն ժողովուրդի մտածելակերպին, միջավայրին եւ քաղաքական կեանքի ազդեցութիւնը:

Այսինքն՝ իր ապրած կեանքի ընթացքով, ժողովուրդը կ'որոշէ լեզուին ճակատագիրը:

Լեզուական փոփոխութիւններու , առաւել կամ նուազ չափով ենթակայ են բոլոր լեզուները: Կը փոխուին հնչիւնական կազմն ու օրէնքները, բառերը, քերականական ձեւերը եւ ուղղագրական կանոնները:

Այդ փոփոխութիւնները կը կատարուին անսկատելիօրէն, աստիճանաբար, մինչեւ որ կազմեն նոր որակ, որպէս լեզուի զարգացման նոր փուլ:

Յիշենք՝ հայ ժողովուրդի դառն ճակատագրի հետեւանքով, 387 թուականին Պարսկաստանն ու Բիւզանդիոնը համաձայնեցան Հայաստանը բաժնել երկու մասերու, որոնք ըստ իրենց աշխարհագրական դիրքերուն կոչուեցան Արեւելահայաստան եւ Արեւմտահայաստան:

19-րդ դարուն երբ կը ձեւաւորուէր աշխարհաբարը իբրեւ գրական լեզու, Հայաստանի երկուածութիւնը կը շարունակուէր: Ամէն մէկը ունէր իր տնտեսական, քաղաքական եւ մշակութային կեդրոնը: Արեւելահայաստանի կեդրոնն էր՝ Թիֆլիսը, Արեւմտահայաստանի կեդրոնը՝ Կ. Պոլիսը:

Գրական հայերէնի երկու տարբերակները՝ արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը կազմուեցան հիմք ունենալով երկու կարեւորագոյն բարբառներ:

Արեւելեան Հայաստանի գրական լեզուի հիմքը դարձաւ Արարատեան դաշտավայրի խօսակցական լեզուն՝ արարատեան «ուսմ» ճիւղի բարբառը:

Իսկ արեւմտահայերէնի հիմքը դարձաւ Կ. Պոլսոյ «կը » ճիւղի բարբառը:

Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի տարբերութիւնները ի յայտ կու գան ուղղագրութեան, ձեւաբանութեան, շարահիւսութեան, բառագիտութեան եւ հնչիւնական համակարգին մէջ:

Բ.- Արեւելահայերէնի եւ Արեւմտահայերէնի Չարգացման Ուղիները



Թէ Ինչու Գրական Չայերէնի Երկու Տարբերակները Ունեցան Չարգացման Տարբեր Ուղղութիւններ

Քանի որ լեզուի մը բոլոր յատկութիւնները սերտօրէն առնչուած են ժողովուրդին ապրած միջավայրին եւ քաղաքական կեանքին հետ:

Չետեւաբար հայութեան երկու հատուածներու պատմական ճակատագրին հետեւանքով, գրական հայերէնի երկու տարբերակները՝ արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը ունեցան զարգացման տարբեր ուղղութիւններ եւ տարբեր ճակատագիր:

Այս առումով Արեւելահայերէնին վիճակուեցաւ դառնալ պետական լեզու:

Մինչ Արեւմտահայերէնի անորոշ հեռանկարը պատճառ դարձաւ որպէսզի լեզուաբանական Նորագոյն մեթոտներով քննութիւնը հիմնուի միայն Արեւելահայերէնի վրայ որպէս՝ պետական լեզու:

Բոլորովին մոռնալով, որ ժամանակակից հայոց լեզուի կառուցուածքի ամբողջական Նկարագրութիւնը տալու համար, չենք կրնար անտեսել արեւմտահայերէնի գոյութեան փաստը:

Արեւելահայերէնը որպէս ժողովրդական պարզ լեզու դարձաւ մատչելի ժողովուրդի բոլոր խաւերուն համար:

Իսկ արեւմտահայերէնը պահելով գրաբարեան դասական դրոշմը, դարձաւ մենաշնորհը գրողներու եւ մտաւորականներու:

Չեռու մնաց ժողովուրդի լայն զանգուածներէն, որոնք կառչած մնացին իրենց գաւառաբարբառին:

Գրական հայերէնի այս երկու դրսեւորումները, իրենց լեզուական կառուցուածքով ունին որոշ տարբերութիւններ:

Արեւելահայերէնը իր քերականութեամբ մօտիկ է գրաբարին, իսկ բառապաշարով հեռու:

Մինչ արեւմտահայերէնը, ճիշդ հակառակը՝ իր լեզուական արժեքով աւելի մօտ է գրաբարին, քերականութեամբ՝ հեռու:

Չգալի է տարբերութիւնը հնչիւնական համակարգին մէջ:

Արեւելահայերէնը հաւատարիմ մնաց գրաբարեան դասական հայերէնի, Մետրոպեան գիրերու ստեղծուած մէկ հնչիւնին մէկ տառ սկզբունքին:

Այդպիսով արեւելահայերէնը պահեց եռաշարք բաղաձայնական համակարգը:

Այսինքն՝ հին հայերէնի բաղաձայն հնչիւններու համապատասխան որակները: Այստեղ կարելոր դեր ունի շնչեղ-ոչ շնչեղ հակադրութիւնը :

Ինչպէս՝ բ, պ, փ, - գ, կ, ք, -դ, տ, թ, - ձ, ծ, ց, - ջ, ճ, չ, :

Իսկ արեւմտահայերէնը պահեց միայն երկշարք բաղաձայնական համակարգը:

Այդպիսով յառաջացան նմանաձայն, նոյնահունչ տառեր:





հնչպէս՝ բ, փ, - գ, ք,- ջ, չ,- ձ,ց, ուր գոյութիւն չունի հնչեղ -ոչ հնչեղ հակադրութիւնը:

Այս երեւոյթը պատճառ դարձած է աշակերտին մօտ շփոթ ստեղծելու: Եւ այդ պատճառով նոյնահնչիւն տառերը յաճախ կը գրուին մէկը միւսին փոխարէն:

Յետեւաբար , նոյն հնչիւնը տարբեր տառերով, եւ նոյն տառը տարբեր հնչիւններով արտայայտելու միջոցը,գիտականօրէն կը նկատուի այբուբեններու թերութիւններէն մէկը:

Ահա թէ ինչու գրական հայերէնի երկու տարբերակները՝Արեւելահայերէնն ու Արեւմտահայերէնը, պատմական իրադարձութիւններու, ժամանակաշրջանի քաղաքական վերիվայրումներու պատճառով, ունեցան զարգացման տարբեր ուղղութիւններ:

Գ.- Արեւմտահայերէնը Ոչ Պետական Բայց՝ Ազգային Լեզու է

Արեւմտահայերէն ԹԷ՞ Սփիւռքահայերէն

Անցնող տասնամեակներուն, Սփիւռքի գաղութներուն մէջ հայկական վարժարաններու թիւի նուազումով, հայ սերունդներուն դաստիարակութիւնը դարձաւ խնդրոյ առարկայ :

Լիբանանի հայահոծ գաղութին մէջ վարժարան մը կը փակուէր: Անդին Փարիզի մէջ համարեայ գոյութիւն չունէր Սամուէլ Մուրատեան վարժարանը:

Սփիւռքի մամուլը ողորդեցաւ զգաստութեան կոչերով, ըմբռնելու պահին ծանրակշիռ բնոյթը, առաջըր առնելու սպառնացող վտանգին:

Եւ հասանք այն եզրակացութեան, թէ Յամասփիւռքեան ուսումնական պատասխանատու մարմնի մը գոյութիւնը այդ օրերուն ոչ միայն անհրաժեշտութիւն, այլեւ անյապաղելի պահանջ մըն է:

Այդպիսով միայն կարելի է կանխել Սփիւռքի գաղութներուն մէջ հայապահպանման հիմնական ազդակի տեղատուութիւնը, Յայոց լեզուի ընդհանուր նահանջը:

Բայց չէ՞ որ մենք աւելի շատ կը խօսինք, քան կը գործենք: Չարմանալի չէ, որ մինչեւ այսօր դեռ չենք հասած շօշափելի արդիւնքներու եւ դրութիւնը դարձած է աւելի մտահոգիչ:

Լեզուի նահանջը ընդհանուր եւ տխուր երեւոյթ մը կը պարզէ ամէնուրեք: Երբ տակաւին օրէ օր դպրոցներ կը փակուին Սփիւռքի տարբեր գաղութներու մէջ:

Յայոց լեզուն կը նահանջէ ամէնուր եւ ամէն տեղ: Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ նահանջը զգալի է հասարակական բնագաւառներու մէջ իր խիստ սահմանափակ գործածութեամբ:

Որովհետեւ նոր սերունդը չունի հայերէն լեզուամտածողութիւն, որովհետեւ շրջապատի մէջ տիրող ընթացիկ լեզուն օտար լեզուն է:

Դրութիւնը կը տարբերի Արեւելքի մեր գաղութներէն, ուր դեռ կը գործեն ամենօրեայ հայկական վարժարաններ: Այս պարագային ալ զգալի է հայերէն լեզուի նահանջը՝ որպէս որակ: Որովհետեւ քիչ չեն ծնողներուն թիւը , որոնք նախապատուութիւնը կու տան օտար վարժարաններուն եւ իրենց զաւակներուն հետ կը խօսին օտար լեզուով:



Եթէ Սփիւռքի ընդհանուր պատկերը ունենանք մեր աչքին առջեւ պիտի տեսնենք, թէ այսօր գրեթէ անհետացած է գաւառաբարբառով խօսող սերունդը:

Իսկ ժողովուրդին կենդանի լեզուա-հաղորդակցման միջոցը խօսակցական լեզուն է, որ հասարակութեան տարբեր խաւերու մօտ յառաջացուցած է բառապաշարի զգալի նահանջ, եւ լեզուի աղաւաղում:

Այն պատճառով, որ Սփիւռքահայը զանազան գաղթօճախներու մէջ , շարունակաբար շփման մէջ կը գտնուի տեղացի բնակչութեան լեզուական աշխարհին հետ:

Եւ բնական է, որ լեզուի հնչական տարբերութիւններ յառաջանան միջավայրի եւ շրջապատի ազդեցութեամբ:

Ազդեցութեան նմանօրինակ երեւոյթներ կը յայտնուին բառապաշարի, քերականական կառուցումաձեւերու եւ ընդհանրապէս դարձուածքաբանութեան մէջ:

Չետեւաբար այսօր Սփիւռքի 3 ռդ եւ 4րդ սերունդը միջավայրի եւ շրջապատի ազդեցութեամբ , արիեստականօրէն կը վերստեղծէ դարասկզբի մշակուած արեւմտահայերէնը:

Այս դրութիւնը մեզի ըսել կու տայ, թէ Սփիւռքի գաղութներուն մէջ, ժողովուրդին խօսակցական լեզուն սփիւռքահայերէնն է:

Նման պարագայ մը, յետագային կրնայ խորացնել գրական եւ խօսակցական լեզուներու միջեւ եղած տարբերութիւնները:

Եւ օր մը հարուստ եւ կորովի արեւմտահայերէնը, ժողովուրդի մեծամասնութեան համար կրնայ դառնալ գրքային, ոչ կենդանի: Այն ինչ որ պատահեցաւ մեր հին լեզուի՝ գրաբարին հետ:

Երեւոյթ մը, որ վերատեսութեան կը կարօտի Յամասփիւռքեան ջանքերով : Յատկապէս ի մտի ունենալով, թէ Արեւմտահայերէնը դեռ կը շարունակէ գոյատեւել իբրեւ սփիւռքահայութեան լեզուա-հաղորդակցման միջոց:

Չետեւաբար, որպէսզի լեզուն մնայ կենդանի, հարկաւոր է նախ փրկել հասարակութիւնը, փրկել հայ դպրոցը:

Զմոռնանք՝ որ ժողովուրդը ինքն է, որ կ'որոշէ լեզուին ճակատագիրը...

Դ. Արեւելահայերէնն ու Արեւմտահայերէնը Չայոց Լեզուի Չարստութիւնն Եւ

Եթէ մենք՝ պատմական ճակատագրի բերումով, քաղաքական դժբախտ բաժանմամբ ունեցանք արեւելեան եւ արեւմտեան աշխարհաբարը, լեզուական տեսանկիւնէն, մեր լեզուի այս երկու տարբերակները կը հանդիսանան հայոց լեզուի հարստութիւնը:

Լեզուներու զարգացման օրէնքին համաձայն , երբ ժողովուրդի մը գաւառաբարբառներէն մին՝ գերակշռութիւնը ունի ցեղակից բարբառներու վրայ , իր կազմութեան կատարելութեամբ, ժամանակի ընթացքին այդ բարբառը կը սկսի տիրապետել միւսներուն վրայ, ի վերջոյ կը դառնայ պաշտօնապէս ընդունուած լեզու:



Այսպէս պատահած է Ֆրանսայի Իլ տը Ֆրանսի լեզուի , եւ նոյնպէս Գերմանիոյ Յարաւային գերմաներէնի պարագային, նաեւ ուրիշ երկիրներու մէջ: Այն ինչ որ պատահած է Յին հայերէնի եւ Նոր հայերէնին համար:

Օրինակ, ինչ անպատեհութիւն ունեցած է Ֆրանսերէնի համար «Փրովենսիալ» լեզուի եւ գրականութեան գոյութիւնը: Կամ անգլիական եւ ամերիկեան անգլերէնը, որ թէեւ տարբեր ազգութիւններու լեզուներ են, բայց միաժամանակ կը հանդիսանան միեւնոյն լեզուի երկու ձեւերը:

Յետեւաբար կ'ուզենք շեշտել՝ թէ Յայոց լեզուի երկու տարբերակներու՝ Արեւելահայերէնի եւ Արեւմտահայերէնի գոյութիւնը, չի նշանակեր երկու տարբեր ազգային լեզուներու գոյութիւնը:

Այլ կը նշանակէ, թէ հայ ժողովուրդի գրական լեզուի երկու տարբերակները՝ ժամանակակից հայերէնի կառուցուածքի ամբողջական պատկերն է: Յայոց ազգային լեզուի գոյութեան երկու ձեւերն են

Եւ կը նշանակէ՝ թէ Յայ ժողովուրդը ունի մէկ Ազգային լեզու՝ Արդի Յայերէնը, իր գրական երկու դրսեւորումներով:

Ե. Արեւմտահայերէնը՝ Արեւմտահայութեան Գոյութեան Փաստն է

« Լեզուն ամենանուրբ երեւոյթներից է, սիրողականութիւն չի հանդուրժում,

կամայականութիւններ չի հանդուրժում»:

Գեորգ Ջահուկեան

Եթէ կարենանք ճիշդ ընկալել մեր մեծերուն՝ հայոց լեզուի պատմութեան խորագետ, անուանի հայագետներու , հայագիտութեան տեսաբաններու խորհուրդները, պիտի կարենանք իրականցնել մեր ազգային միասնութիւնը, հայրենիքի, ազգի ու ժողովուրդի , հայ գրականութեան ու հայ մշակոյթի միասնութեամբ :

Անցնող տասնամեակներուն, հայագիտութեան խոշորագոյն լեզուաբաններէն , միջազգային ճանաչում ունեցող ներհուն գիտնական՝ Ակադեմիկոս Գեորգ Ջահուկեան , (որուն աշակերտելու բախտը ունեցած եմ), վերլուծելով հայ ժողովուրդի լեզուական մերձեցման խնդիրը, լեզուագետի իր հիմնաւորուած խօսքը, որպէս կտակ կը փոխանցեր սերունդներուն .-

« Յայ ժողովուրդի տարբեր հատուածների լեզուական մերձեցման խնդիրը առաջնակարգ, բայց աստիճանական լուծում պահանջող խնդիր է, որ պէտք է հիմնուի որոշակի ծրագրերի վրայ:

« Եթէ մենք կարողանանք ներքին եւ արտաքին Սփիւռքի ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպումներ ունենալ, մշակել տառադարձութեան ըստ հնարաւորին մօտ սկզբունքներ. որոշենք տերմինաբանութեան եւ բառագործածութեան քիչ թէ շատ ընդհանուր նորմաներ, իրականացնենք ուղղագրական , կետադրական եւ ուղղախօսական ընդհանուր միջոցառումներ, ընդհանրապէս քայլ առ քայլ իրար ընդառաջ գնանք այն բոլոր հարցերուն , որոնց մէջ կարելի է ընդառաջ գնալ , այդ կը լինի շատ անելի օգտակար , քան արեւելահայ ուղղագրութեան միակողմանի եւ հապճեպ փոփոխութիւնը»:

Այս ուղղութեամբ կարելոր է ընդգծել հետեւեալ նկատառումները , ի մտի ունենալով.-



---

Ա.- Լեզուն ընդհանրապէս կը կազմուի կենդանի գործածութեան մէջ:

Լեզուն կարելի չէ ստեղծել մեր ցանկութեամբ եւ մեր ցանկացած պահին,;

Բ.- Երկու գրականներու բառապաշարը, կարելի է բնութագրել մերձեցման փոխներթափանցման որոշակի միտումներով:

Գ.- Արեւմտահայերէնի քննութիւնը հարկաւոր է կատարել լեզուաբանական նորագոյն մեթոտներով, նկատի առնել՝-

1- Գրական արեւմտահայերէնի կանոնական մակարդակը, քերականական կառուցուածքը, զարգացման ներկայ իրավիճակին մէջ:

2- Արեւմտահայերէնի լեզուական երանգները, բառածեւերու, կենսունակ բառերու ներկայիս ունեցած գործածութեան ոլորտները: Լեզուի զարգացման ուղղուածութիւնը:

Որովհետեւ՝ կանոնաւորուած արեւմտահայերէնը միայն կրնայ դիմանալ սփիւռքացած մեր կեանքի վերիվայրումներուն:

Պահպանե՛նք Արեւմտահայերէնը, իր հարուստ աւանդոյթներով :

Արեւմտահայերէնը՝ Արեւմտեան Հայաստանի, Հայ Ժողովուրդի Արեւմտահայ հատուածի,

ազգային գոյութեան եւ եութեան անհերքելի, ամենախոշոր փաստն է...:

ՆՈՒԱՐԴ ՄԱՏՈՅԵԱՆ ՏԱՐԱԳՃԵԱՆ

(Իր դիմատետրի էջէն քաղուած)

## Յօդուածներ

Հայութիւնը, ԹԷ՝ Սկզբունքը.

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ



Դարձեա՛լ Թէքէեան, այո՛, որովհետեւ իր խմբագրականները հայ պատմութեան բանական դպրոց են: Այս խմբագրականը լոյս տեսած է Արեւի մէջ, 6 Սեպտեմբեր 1915ին, Եղեռնի անդոհանքի օրերուն:

Այստեղ Թէքէեան լուսարձակի տակ կ'առնէ ատենի հայ մտաւորականութեան, ազդեցիկ, առաջնորդ, որոշմնառու մարմիններու երկընտրանք մը. նիւթապէս թիկունք կանգնիլ տասանորդուած հայութեան անապատի խլեակներուն, թէ՛ կամաւորական գունդերուն:

Թէքէեան խնդրին միջանի երեսակներ կը բացայայտէ, կը դնէ սկզբունքի հարցեր: Խմբագրականին ընթերցումը մեզ ուրիշ մտորումներու ալ կը տանի, սակայն մենք կը փափաքինք «Չարթօնք»ի ընթերցողին եւ հայութեամբ նախանձախնդիր հայուն ուշադրութիւնը հրաւիրել Թէքէեանի նախընտրութեան: Մեծ մտածողը նախապատուութիւն չի՛ դնէր երկու անհրաժեշտութիւններուն միջեւ: Ուրիշ լուծում կ'առաջարկէ եւ ո՛չ իբրեւ միջին օղակ, այլ մեկնելով կացութեան տազնապալիութենէն. Թէքէեան կը թելադրէ. «Աշխատիւք, շա՛տ աշխատիւք, լա՛ւ աշխատիւք ասոր համար»:

Թէքէեանի թելադրանքին այժմեականութիւնը որեւէ երկընտրանք չի ճանչնար:

Անդրանիկ Տազետեան

Բարեկամ մը, անցեալ օր, հայկական ներկայ անանուանելի կացութեան վրայ պզտիկ վիճաբանութեան մը ընթացքին, ըսաւ.

– Հարկա՛ւ, կը կարծէիք հապա որ առանց զոհի՞, առանց ջարդի՞ պիտի ստանայինք ազատութիւնը...:

Բարեմտօրէն, ազնուօրէն, բայց եւ «յեղափոխականօրէն» ըսուած այս խօսքերը սարսուռ տուին մեզի: Չպատասխանեցինք, որովհետեւ խնդիրը որ այդպէս մէջտեղ կը նետուէր յանկարծակի, ամէնէն ծանրն ու արիւնտոն է խնդիրներուն, բովանդակ ազգի մը մահուան ծանրութեամբը լեցուն եւ անոր արեան ծովին վրայ ծփացող խնդիր մը:

Մտածեցինք, սակայն, ինչպէս այդ խօսքէն առաջ, անկէ վերջն ալ, այդ ահաւոր խնդրին վրայ՝ թէ ազգը պէ՞տք էր նոր զոհեր տար, նոր ջարդեր կրէ՞ր՝ ստանալու համար այն ազատութիւնը որուն սերը միշտ կը մնուցանէր եւ որուն իրականացման ժամը մօտեցած կարծեց ներկայ մեծ պատերազմին սկիզբը եւ մասնաւորապէս այդ պատերազմին մէջ Թուրքիոյ մասնակցութենէն ետքը...:



Կը խոստովանիւք – խոնարհաբար – թէ վերջնական, վճռական եզրակացութիւններու ջանգեցանք բուն այդ մեծ խնդրին մասին, խնդիրներու խնդիրը՝ որ աւելի շատ պիտի զբաղեցնէ հաւանօրէն վաղը, մնացորդ բեկորները հայութեան՝ քան ինչ որ այսօր մեզ կը զբաղեցնէ. որ այսօր ալ, վաղն ալ, ո՛րեւէ գործնական օգտակարութիւն չի ներկայացներ այլեւս՝ որովհետեւ շատ ուշ է եւ պետք էր երէկ մտածած ըլլայիւք անոր մասին. որ – սակայն – իր անօգուտութեանը եւ իր պատճառած յաւելուածական տառապանքին հետ միասին՝ հարկադրաբար կը ցցուի կը միտուի մեր միտքերուն եւ մեր խիղճերուն մէջ... Եթէ այդ միտքերը ուրիշ աւելի հաճելի առարկաներով գրաւուած եւ այդ խիղճերը այս կամ այն կերպով փակուած, գրահապատուած չեն...:

Խիղճերու գրահապատումին կը ծառայեն, բացի միւս ծանօթ նիւթերէն – եսասիրութիւն, ազահուութիւն, անզգայութիւն, անտարբերութիւն, եւն. – նաեւ... Սկզբունքները:

Այո՛, Սկզբունքները, որոնք կեանքի առաջնորդներ, իմաստութեան խտացումներ, բեղմնաւոր հուսներ են իրենցմէ օգտուիլ գիտցողներուն ձեռքին մէջ, կ'ըլլան քարէ կափարիչներ խիղճերուն վրայ այն կէս-գիտուններուն, այն տարուողներուն ու տանողներուն՝ որոնք շնորհիւ իրենց խանդին եւ իրենց գտնուած միջավայրին մէջ աւելի խելահաս մարդերու սովին՝ պատասխանատու գործեր կը կատարեն, երբեմն այնքա՛ն պատասխանատու որ հետեւանքը կ'անդրադառնայ ամբողջ ազգի մը ճակատագրին վրայ...: Սկզբունքն է որ զիրենք վարած է մինչեւ այն ատեն, եւ Սկզբունքը կը վարէ զիրենք նորէն՝ իր ամենէն շնորհալից եւ արիւնոզող ծախողութենէն վերջն ալ, երբ ուրիշ ամէն մտածում, ամէն զգացում խեղդելով թաղելով իր ներքէն՝ սոսկալի տիրականութեամբ մը կ'ըսէ կարծես.

– Ի՛նչ փոյթ թէ անհետանայ նոյն իսկ Ազգը որուն փրկութեան համար ես ստեղծուած կամ ընտրուած էի. բաւ է որ ես՝ Սկզբունք՝ կենդանի մնամ...:

Անո՛նք՝ որոնց քով Սկզբունքները այսպէս ամուր են – ամրութիւն մը զոր իրենց տիրոջ մտքէն ու սրտէն չէ որ կ'անուեն, այլ շատ անգամ անոնց մտքին ու սրտին անգործութենէն՝ Սկզբունքներն ըլլալով արդէն միշտ կարծր ու գործածողն ինք պարտական ըլլալով զանոնք կակղել եւ օգտակար դարձնել... – անո՛նք միայն, այս արիւն-արցունքի օրերուն մէջ ալ ուր ամբողջ Զայրենիքը բերանաբաց մեծ վերք մըն է եղեր, պաղարեամբ կրնան խօսիլ Սկզբունքին վրայ եւ ըսել – օրինակի համար – թէ հայութիւնը չի մեռնիր՝ կը բաւէ որ կռիւը շարունակէ, թէ այդ կռիւէն պիտի ծնին լաւագոյն օրեր, պիտի ծնի Ազատութիւնն իր Արշալոյսովը, Արեւովը, Բոցերովը եւ դեռ ուրիշ շատ մը մաշած-փտած թատերական զարդեղէններովը՝ որոնց ամենուն մէկ կից մը տալու եւ դժոխք դրկելու չես գիտեր ի՛նչ անզուսպ փափաք մը կը զգաս դուն հիմա...:

Բայց, եկէ՛ք խօսինք վայրկեան մը – եթէ կարելի է – պայմանաւ որ խօսքերնիս մարդու հետ ըլլայ եւ ոչ թէ Սկզբունքին հետ՝ զոր մենք ալ անշուշտ կը ճանչնանք քիչ մը...:

Կռի՛ւը, այո՛, կը շարունակուի եւ պետք է շարունակուի, ոչ թէ որովհետեւ «սկսած է անգամ մը», այլ որովհետեւ դադրեցնելը քու ձեռքդ չէ, դադրեցնելէն ո՛րեւէ օգուտ չկայ այսօր, ոչի՛նչ կայ որ կրնաս փրկել, ո՛չ մէկ պայման՝ զոր կրնաս ընդունիլ տալ թշնամիիդ.. եւ դեռ շատ մը ուրիշ պատճառներ զորս ամէն մարդ կրնայ ինքնին գտնել ու աւելցնել:

Կռի՛ւը, այո՛, չի դադիր. բայց այն պահուն իսկ ուր այդ կռիւին ուղղակի զոհերն եղող – ասիկա ճշմարտութիւն մըն է զոր ծածկելէն օգուտ չկայ բնաւ – հարիւր հազարաւորներու մահէն ետք՝ հարիւր հազարաւոր կէս-մեռելներ ալ օգնութեան կը սպասեն չմեռնելու համար, ա՛յն պահուն



ուր մօտիկ եւ հեռաւոր ապագայի ազատ կամ գերի հայութեան վերապրումին միակ յոյսն անոնք են՝ մենք չենք..., այդ վայրկեանին ըսել թէ կռիւը միայն կայ մեր մեծագոյն օգնութեանն արժանի, թէ մնացեալը «բարեգործութիւն» է զոր կրնան աղաներն ալ ընել, թէ մենք ամէն բանէ առաջ յեղափոխականներ ենք... եւ ուրիշ այս կարգի սկզբունքային անսրտութիւններ՝ սա՛ միայն կը յայտնեն դժբախտաբար, թէ մենք մարդիկ ենք որոնք Սկզբունքը կափարիչ ըրած ու գոցած են իրենց խղճին ալ, իրենց մտքին ալ վրայ...:

Իրենց մտքին ալ վրայ՝ որովհետեւ որի՞ համար է այն ազատութիւնը զոր իվերջոյ պիտի շահինք եղեր վաղը՝ կռուելով դէռ. որի՞ համար համար մանաւանդ կրնայինք պահանջել զայն ու որի՞ համար է որ պիտի տային զայն մեզի...: Ճշմարիտ է, խորապէս ճշմարիտ, թէ միակ յոյսը՝ անոնք, այսօր 150-200,000 փախստականներն են Կովկասի, որոնք երանի՛ թէ վաղը 300-400,000 ըլլային, որովհետեւ որքա՛ն աւելի՝ այնքա՛ն փրկուելու եւ մեզ ալ իրենց հետ փրկելու յոյսը կը ներկայացնեն անոնք: Թուրքիան սպանդանոց մըն է դարձեր հայուն համար, չէ՞ք տեսներ: Չափազանցութիւն՝ կայ լուրերուն մէջ. իցի՛ւ թէ. բայց ինչքա՛ն ցաւալի է որ այդ բառը մեր կողմէն կ'արտասանուի հիմա, սակարկութեան մը ձեւով՝ ուր Նիւթի մը վրայ գեղջ կ'ըլլայ, կարծես ուրիշ մը բարձրացնելու համար՝ առանց խորհելու թէ երկուքն ալ մե՛րն են ու այն երէ՛կ էր որ մէկը միւսէն առաջ պէտք էր անցընել անպատճառ...:

Սթափեցէ՛ք, սթափի՛նք ամէնքս: Չօրաւոր կամ տկար քիչի խնդիր չէ ասիկա, այլ մահու եւ կենաց խնդիր զոր Ազգը երբեք այսքան ահարկու ու ծանր երեւոյթով մը տեսած չէր իր դիմաց, եւ խնդիրն ալ իր ծանրութեանը համեմատ Ազգը այսքան խե՛ղճ տեսած չէր: Յեղափոխութեան ու բարեգործութեան, յեղափոխականի ու աղայի խտիր կրնա՞յ մնալ տակաւին՝ երբ ամէն բան կորսուելու, ընկղմելու վրայ է: Ու բարեգործութիւնն ալ արդէն կռիւ չէ՞ հիմա, թշնամոյն ազատօրէն, լայնօրէն, վճռօրէն գործադրած բնաջնջումի ծրագրին դէմ՝ ապրելու, տնելու եւ ազատելու կռիւը, Մահուան դէմ Յո՛յսի կռիւը...:

Ետ չդառնանք երեկին նայելու., համաձայն ենք, որովհետեւ Այսօրուան համար՝ ա՛լ բնաւ օգուտ չունի ան. բայց Այսօրուան ու Վաղուան վրայ մեր ամբողջ աչքերովն ու սիրտովը նայինք: Բարեգործութեան եւ Կռիւին աղբիւրը մէ՛կ թող ըլլայ Նիւթապէս, ինչպէս մէ՛կ է մեր սրտերուն մէջ բարոյապէս. միայն քանակա՞նք՝ որ առատ ըլլայ ան՝ որպէսզի երկու պէտքերն ալ կարենան սնանիլ անկէ: Աշխատինք, շա՛տ աշխատինք, լա՛ւ աշխատինք ասոր համար: Միմիայն այս կերպո՛վ է՝ որ կրնանք մեր խիղճերը քիչ մը խաղաղել թերեւս...:

Եւ մի՛ ըսէք, Աստուծոյ սիրոյն, սա՛ քստմնելի խօսքը. «Դեռ շատ սեւ օրեր ունինք տեսնալիք, դեռ շատ կորուստներ ունինք ողբալիք: Կեանքերու հարկն է որ պիտի հատուցանենք պատերազմի դաժան Մողոքին, արիւնի տուրքն է որ պիտի մատուցանենք Ազատութեան Աստուծոյն» (Խմբագրական Յուսաբերի, թիւ 59, Սեպտ. 2):

Հա՛յ էք դուք՝ թէ՞ ոչ խելթեցած Սկզբունք մը:

## Տեսակէտ

### ՀԱԿԱՌՈՒՄ ՀԱՅԵՐ ԳԷԹ ԹՈՂ ՍՈՐԿԻՆ՝

### ԻՐԱՏԵՍ ՓՐԱԿՄԱԹԻԶՄԷՆ



Արեւելահայաստանի Բ. Հանրապետութիւնը՝ ՀԱՅԿԱԿԱՆ Սովետական Սոցիալիստականը, կերտեց մեր պատմութեան Բ. Ոսկեդարը՝ Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանով, Ազգային Ակադեմիայով, Բիւրականի Միջազգային ու Միութենական (համասովետական) Աստղադիտարանով, Մերգելեան Մաթեմաթիքական Միութենական Ինստիտուտով, Ազգային Օփերայի Պալատով, Սունդուկեան Թատրոնով, Սասունցի Դաւիթ Չօրասիւնով ու Մարշալ Բաղդամեանով եւ Ծովակալ Իսկակովով... Մանուկ

Աբեղեանով, Հրաչեայ Աճառեանով ու Աւետիք Իսահակեանով, Օրբելի եղբայրներով, Ալիխանեան եղբայրներով, Վիկտոր Համբարձումեանով (Միջազգային Աստղագիտութեան Միութեան Նախագահով...) ու Սերգէյ Մերգելեանով, Մայր Հայաստան վեհանիստ յուշակոթողով՝ սուրը ձեռքին եւ հայեացքը Արեւմտահայաստանին..., Մեծ Եղեռնի երկնասլաց Յուշահամալիրով ու Անմար Կրակով, Էրեբունիով ու Սարդարապատով..., Հայկ Նահապետի եւ Սասունցի Դաւիթի յուշարձաններով, Հանրագիտարանի շարքով, Արեւելահայաստանի ակադեմիական ԱՏԼԱՍ-ով, Հայոց Լեզուի Արմատական Բառարանով ու ՀԱՅ ՏԱՌԸ Գեղագիտական Ալպովով... Եւ տասնեակ հազար տպաքանակովներ հին ու նոր գրական ժառանգութեան հատորներով ու գրախանութներով եւ Միասնիկեանի Անուան Ազգային Գրադարանով, եւայլն, եւայլն... Եւ այն հրատարակութիւններով ու ՀԱՅՊԵՏՅՐԱՏ Հրատարակչատունով:

Մինչդեռ Արեւելահայաստանի Գ. Հանրապետութիւնը՝ իր օլիգարխիական դրամատիրական համակարգով, կառուցեց Երեւանի մէկ փողոցին անկիւնը, ԴՐԱՄ-ի աղբատիկ արձանը, «անկախութեան» օրով, գրկուած ըլլալով Սովետական Մեծ Պետութեան Նեցուկէն...: Եւ տակաւին, կուրանալով՝ ուրանալով Սովետ Մեծ Պետութեան գլխաւոր ուժը հանդիսացող Ռուսաստանի հայանպաստ երեք պատմական կեցուածքները (Սան-Սթեֆանոյի Դաշնագրի Յօդ. 16-րդը, Արեւմտահայաստանի անկախութեան Դեկրետն ու 1920 թուի Նոյեմբեր 29-ի փրկարար միջամտութիւնը), այսօր եւս կը շարունակէ հակառուսական արշաւը... անձնասպանական խելագարութիւնը, դաս չառնելով գէթ՝ մեր ոխերիմ թշնամի Թուրքիոյ փրակմաթիք կեցուածքէն՝ իր ոխերիմ թշնամի Ռուսաստանի նկատմամբ...:

Հիմա տեսնե՞ք թէ՛ վերջին երկու տարիներուն ընթացքին, Էրտողանի փանթուրքական նոր-օսմանական Թուրքիան՝ ինչպիսի իրատեսական փրակմաթիք մը կը ցուցաբերէ Ռուսաստանի նկատմամբ, հրաժարելով՝ հակառուսական ճակատումի վարքագիծէն, երբ Թուրքիա մեզմէ շատ աւելի հզօր ուժ մըն է..., եւ սակայն կը համբերէ... քանի որ իրատես է:

• • •





Հիւսիսային Ափրիկէի արաբական հինգ երկիրներէն՝ Եգիպտոսի, Ալճերիոյ եւ Մարոքի մէջ, Սուլթան Էրտողան չունի օսմանամետ հետեւորդներ, սակայն Լիպիոյ մէջ ունի աւելի մեծ թիւով օսմանամետ հետեւորդներ քան Թունիսի մէջ:

Ուրեմն, Էրտողան կը փորձէ վերադառնալ Լիպիա, իբր առաջին քայլ, օսմանեան իշխանութիւնը հաստատելու արաբական երկիրներուն վրայ: Անոր Սուրիա վերադառնալու առաջին երազը փշրեց Ռուսաստանը: Իրաք վերադառնալու երկրորդ երազը փշրեցին Իրանը եւ ԱՄՆ-ը: Լիբանան վերադարձի երրորդ երազը փշրեցին՝ Սեուտական Արաբիան, Էմիրութիւններն ու Յըզպալլան: Իսկ այսօր՝ Լիպիա վերադարձի իր վերջին երազին թիւ մէկ խոչընդոտը Եգիպտոսն է:

Լիպիա ներկայիս պառակտուած է՝ երկբեւեռացումի մէջ է: Օրուան անուանական իշխանութիւնը՝ «Ազգային Համերաշխութեան», դրածոն է ԱՄՆ-ի... որուն դէմ կը պատերազմի Մարեշալ Հաֆթարի բանակը, որուն ուղղակի նեցուկն է Փուրթինի Ռուսաստանը, իսկ անուղղակին՝ ժողովրդային Չինաստանը: Թուրքիան կը պաշտպանէ ԱՄՆ-ի դրածոյ իշխանութիւնը՝ Մարեշալ Հաֆթարի դէմ: Սակայն, Թուրքիոյ հոն վերադարձին դէմ են Եգիպտոսն ու Էմիրութիւնները: Եւ, ԱՄՆ-ի ու Եւրոպայի ձեռնպահութեան կամ անտարբերութեան հետեւանքով, փաստօրէն՝ գետնի վրայ, իրարու դէմ կը կռուին Թուրքիան եւ Ռուսաստանը... սակայն Թուրքիա շատ հաշուենկատ է. մէկ կողմէ՝ օգնելով ԱՄՆ-ի դրածոյ իշխանութեան, կը մեղմացնէ Թրամփի կարծի կեցուածքը իր դէմ, եւ միւս կողմէ՝ ուղղակիօրէն չի ճակատիր Ռուսաստանի դէմ, այլ՝ կը ճակատի Հաֆթարի բանակին հետ, որպէսզի ապագայ քաղաքական լուծումին մասնակից կողմերէն մին հանդիսանալու յոյսը ունենայ: Եւ այդպիսով, գոնէ Լիպիոյ վերակառուցումին բաժնեկից դառնալով՝ տնտեսական շահեր ապահովէ, եթէ Նոյնիսկ՝ քաղաքական շահեր չկարենայ ապահովել... (Նոյնը կը յուսայ՝ Սուրիոյ մէջ...): Էրտողան՝ թուրք բանակի զինուորներէն աւելի, Լիպիա կը տանի սուրիացի իր վարձկան ահաբեկիչները, որոնք դուրս հանեց Սուրիոյ Իտիպի մուհաֆազայէն՝ Ռուսաստանի ճնշումով: Կարճ խօսքով. ոչ վերջնականօրէն կը խզուի ԱՄՆ-էն, եւ ոչ ալ վերջնականօրէն կը յարի Ռուսաստանի, իրատեսական փրակմաթիզմով մը, որ յատուկ է Թուրքիոյ, եւ որ ուսանելի է՝ մասնաւորաբար, մեր հակառուս հայանուն քաջ նազարներուն համար:

Տակաւին. Էրտողան կ'ուզէր Լիպիոյ հետ կնքել համաձայնագիր մը՝ Արեւելեան Միջերկրականի մէջ, Լիպիոյ եւ Թուրքիոյ ծովային սահմանագիծին շուրջ: Թրքական ծովուծի մասնագետ սպաները սերտեցին ինդիքը եւ գտան թէ՛ անհրաժեշտ էր այդ մէկը, հաստատ հիմերու վրայ կատարելու համար, Թուրքիա նախ՝ իր ծովային սահմանագիծը հաստատած ըլլայ Եգիպտոսի, Իսրայէլի կամ Լիբանանի ծովային սահմանին հետ: Ի վերջոյ ամէնէն նպաստաւորը համարուեցաւ՝ Իսրայէլի ծովային սահմանագիծին հետ հաստատել Թուրքիոյ ծովային սահմանագիծը, նաեւ՝ առաջարկել Իսրայէլի՝ իր կազմ արտածումին համար դէպի Եւրոպա, հրաժարիլ "East-Med"ի շատ մեծածախս ծրագրէն, եւ Իսրայէլի ծովափէն մինչեւ թրքական ճիհան նաւահանգիստը երկարող կազատար խողովակներ հաստատել շատ աւելի նուազ ծախսով, եւ՝ Թուրքիոյ վրայով Եւրոպա արտածել կազը, որ շատ աւելի նուազ ծախս կը պահանջէ, իսկ Թուրքիան ալ կրնայ առաջին շուկան ըլլայ, որ կազի իր կարիքին 15 տոկոսը կը ներածէ Իրանէն, եւ 55 տոկոսն ալ՝ Ռուսաստանէն... բայց կ'ուզէ կախեալ չմնալ օտար պետութիւններէ...: Ահա թէ ինչու, վերջին երկու տարիներուն, 2018-2020, Թուրքիա եւ Իսրայէլ սկսան աւելի ջերմօրէն սիրաբանիլ դիւանագիտական հարթակի վրայ, աւելի լայն չափերով առեւտրական փոխանակումներ ունենալ եւ աւելի մեծաթիւ իսրայէլացի զբօսաշրջիկներ սկսան երթալ Թուրքիա, որ առժամաբար առկախուեցաւ Գորոնայի պատճառով...: Թուրքիոյ



արտածումները դեպի Իսրայել հիմա՝ հասան տարեկան 6 միլիառ տոլարի, իսկ ներածումները Իսրայելէն՝ տարեկան 4-5 միլիառ տոլարի:

Այս զարգացումները ցոյց կու տան, որ Էրտողան այնքան ալ լաւատես չէ Ռուսաստանի հետ իր յարաբերութիւններու հեռանկարին նկատմամբ, եւ կը ջանայ՝ կը կրկնենք, ոչ վերջնապէս յարիլ Ռուսաստանի, ոչ ալ վերջնապէս խզուիլ ԱՄՆ-էն ու Իսրայելէն, իր ստրատեգիական դաշնակիցներէն, այլ՝ ընդհակառակը. զօրացնել իր դաշնակցային կապը իր համհարզ տարատնկեալ սիոնական պետութեան հետ, պահպանել՝ իր ՕԹԱՆ-ի անդամակցութիւնը, այնքան ժամանակ, որ գործունակ կրնայ մնալ... իսկ շարունակել համագործակցիլ Ռուսաստանի հետ, մինչեւ Սուրիոյ եւ Լիպիոյ մէջ, քաղաքական լուծումի մը գոյացումը, որուն մասնակիցը դառնալով՝ ապահովելու համար տնտեսական շահեր՝ վստահաբար, յաւելեալ քաղաքական ալ շահեր՝ հաւանաբար...: Ասիկա թրթական փրակմաթիզմ է, որ կը պահանջէ իրատեսութիւն եւ համբերատարութիւն, եւ ոչ թէ՛ ցանկատեսութիւն եւ շտապողականութիւն:

Անցեալին ըսած ենք ու կրկնած... կրկին կը կրկնենք: ԱՄՆ, Թուրքիա եւ Իսրայել երեք համհարզ տարատնկեալ պետութիւններ են, որոնք հաստատուած են ուրիշ բնիկ ժողովուրդներու հայրենիքներուն եւ արեան վրայ... եւ այս անսուրբ երրորդութեան դաշինքը՝ կաթովիկեան անբակտէրի ամուսնութիւն է, այնքան ժամանակ որ ԱՄՆ-ը կը մնայ իմփերիալիստական, Թուրքիան՝ փանթուրքական, իսկ Իսրայելը՝ սիոնական: Այս միջոցին, Թուրքիա եւ Իսրայել ամերիկեան իմփերիալիզմի երկու օձֆշոր ռազմախարսիսներ են: Ամերիկեան իմփերիալիզմի նահանջով, եւ հուսկ մայրամուտով, «անհայր» կը մնան Թուրքիոյ փանթուրքականութիւնը եւ Իսրայելի սիոնականութիւնը, եթէ ասոնք չորդեգրուին Նոր «հօր» մը կողմէ, որ անհաւանական է՝ տեսնելի ապագային, մինչեւ մահացող միաբեւեռ աշխարհակարգին յաջորդող բազմաբեւեռ աշխարհակարգին ամբողջական հաստատումը: Եւ եթէ այդ բազմաբեւեռ աշխարհակարգին մէջ չյայտնուի իմփերիալիստական Նոր պետութիւն մը Արեւմուտքէն, որ կ'որդեգրէ դեպի Արեւելք ծաւալելու ստրատեգիան... Թուրքիոյ փանթուրքիզմը եւ Իսրայելի սիոնականութիւնը վերջնականօրէն կը կորսնցնեն զիրենք որդեգրող «հայր» մը: Եւ սակայն, եթէ մինչ այդ Թուրքիա չտարանջատուի... այդ պարագային, կրնայ պահպանել միայն իր Նոր-օսմանականութիւնը, հաւանաբար...:

Հաւանաբար, եւ ոչ թէ՛ վստահաբար, որովհետեւ Նոր-օսմանականութեան ծրագրին միաժամանակ դէմ են՝ թէ՛ շրջանի Սիւննիական Իսլամի մեծերը (գլխաւորութեամբ Սեւտական Արաբիոյ), որուն թագաւորը Էրտողանը կը նկատէ իրեն թշնամի մրցակից մը... եւ թէ՛ Ծիիթական Իսլամի երկու մեծագոյն ուժերը (Իրանը եւ Հըզպալլան), որոնց չի կրնար յաղթել Թուրքիան:

Այս ամէնուն իրատեսութիւնը ունենալով է որ Սուլթան Էրտողան աճապարեց՝ օգտուելու համար իր համհարզ տարատնկեալ սիոնական պետութենէն, անոր վերջին տարիներու հնարաւորութիւններէն, երբ տեսաւ ամերիկեան իմփերիալիզմի մօտալուտ մայրամուտը: Այս մէկն ալ մաս կը կազմէ թրթական փրակմաթիզմին: Ան տեսաւ Իսրայելի մօտալուտ ազատումը սիոնիզմէն, եւ հաւանական վերածումը՝ դեմոկրատական Պաղեստին պետութեան, ուր կան երկու համայնքներ՝ արաբական եւ հրեական, զոր կ'առաջարկէր Սովետ Միութիւնը 1944 թուին, երբ Արեւմուտքը կ'ուզէր ստեղծել Իսրայելի սիոնական տարատնկեալ պետութիւնը: Եւ այս հեռանկարով, Էրտողան միաժամանակ, Գորոնայի դէմ՝ բժշկական օգնութիւն դրկեց թէ՛ Իսրայելի եւ թէ՛ պաղեստինեան իշխանութեան (Ղազզայի եւ Արեւմտեան Ափին մէջ): Այս մէկն ալ մաս կը կազմէ թրթական դիւանագիտութեան արթուն ու գիտակից փրակմաթիզմին:



Գորոնայի մեծ մարտահրաւերը մերկացուց աշխարհի բոլոր հասարակարգերը հաւասարապէս, թէ՛ իմփերիալիզմի հանգրուանին հասած կապիտալիստական գերզարգացած ապագային, հակաժողովրդական ու դրամապաշտ անմարդկայնական հասարակարգերը, եւ թէ՛ ժողովրդահայրենասիրական կամ սոցիալիստական ազգային ու նախախնամատար մարդկայնական հասարակարգերը՝ իրենց իսկութեան մէջ: Որովհետեւ՝ առաջինները (դրամապաշտերը) տուին շատ ակտիւ մեծ թիւով մարդկային կորուստներ, քան՝ վերջինները (մարդապաշտերը)...: Առաջիններու պետութիւնները կը ծառայէին դրամով յփացած գազան մարդոց, սանձազերծելով զանոնք, որոնք ժողովուրդի բարօրութեան մտահոգութիւնը չունէին, այլ՝ զբաղած էին երկիրը վերածելով վայրի անտառի մը, որուն մէջ մարդը մարդուն գայլ էր, իսկ վերջիններու պետութիւնները կը ծառայէին ժողովուրդին ու հայրենիքին, սանձելով գազան մարդիկը, եւ երկիրը վերածելով այսերկրային դրախտի մը, որուն մէջ մարդը մարդուն եղբայրն էր ու հաւասարը..., քանի որ նախախնամատար հասարակարգեր էին, անդասակարգ ու միակուսակցական, ուր կարելի էր գոյացնել ազգային համերաշխութիւնն ու իրերօգնութիւնը, որուն պայծառ տիպարը հանդիսացաւ՝ 1.5 միլիառ հաշուող ժողովրդային Կարմիր Չինաստանը:

Իսկ գերզարգացած կապիտալիզմի երկրին մէջ, որ քսանամեակ մը (1990-2019) եղաւ միաբեւեռ աշխարհակարգի միահեծան Ոստիկանապետը աշխարհի, Սովետ Միութեան կազմալուծումէն ետք... եւ գործեց սանձազերծ եւ անհակակշիռ ամենուրեք տարածելով իր ռազմական ուժը՝ Աֆղանիստանի, Իրաքի, չքնա՛ղ Եուկոսլաւիոյ, Լիպիոյ եւ Սուրիոյ մէջ, ակերելով ու քանդելով, նաեւ՝ Լիբանանի մէջ, ուղղակի միջամտութեամբ եւ՝ իր երկու օֆֆշոր ռազմախարիսիսներուն, Թուրքիոյ եւ սիոնական պետութեան միջոցով: Այսինքն, Միացեալ Նահանգներու ժողովուրդին վիճակուեցաւ ամենէն դժխեմ ճակատագիրը՝ Գորոնայի մարտահրաւերին դիմաց..., քանի որ ԱՄՆ-ի տարատնկեալ պետութիւնը նախախնամատար չէր, այլ՝ վայրի դրամատիրական, իմփերիալիստական... ուր տակաւին կը գոյատեւէր ցեղային խտրականութիւնը, որ վերստին պայթեցաւ վերջին շաբաթներուն, ԱՄՆ-ի 12 քաղաքներուն մէջ, սեւամորթ բնակչութեան ըմբոստութեամբ, ստեղծելով՝ անիշխանութեան իրավիճակ մը: Եւ՝ տակաւին, Թրամփ կը խօսի ԱՄՆ-ի տիպար դեմոկրատիայի մասին...:

Վերադառնալով հակառուսական, քաջնազարեան կամ տոնքիշոթեան արշաւին մասնակցող հայանուն ազգակործաններուն, անոնց հարց կու տանք. Ենթադրենք պահ մը, որ Ռուսաստան՝ զգուելով Արեւելահայաստանի մէջ պաշտօնական թէ անպաշտօնական մակարդակներու վրայ կատարուող հակառուսական ցնորածին, յիմար եւ ախմախ քարոզչութենէն, Թուրքիոյ հետ անոր սահմանագիծէն քաշէ իր զօրքը... այդ ո՞ր զօրքն է, որ Արեւելահայաստանը պիտի պաշտպանէ թուրք-թաթարական աքցանին սպառնալիքին դէմ: Ձեր առաջին հակառուս նախագահն անգամ՝ լատին Լեւոն Տէր Պետրոսեանը ռուսական բանակէն տարբեր բանակ չգտաւ...: Եւ՝ մի մոռնաք, կը կրկնենք, որ եթէ դուք, չգտնելով այլ բանակ, փորձուիք որդեգրել թրքական օրիենտացիա, Թուրքիա ինքը ձեր նման ախմախ չէ որ փորձէ փոխարինել ռուսական զօրքին... իսկ եթէ փորձէ՞... ռուսական զօրքը՝ ձեր կամքին հակառակ, ինք կը միջամտէ եւ դուրս կը շարտէ թրքական զօրքը, եւ կը հաստատուի Արեւելահայաստանի արեւմտեան սահմանագիծին վրայ՝ Թուրքիոյ դէմ, թէկուզ նկատուի որպէս գրաւող բանակ... քանի որ ինք ալ ձեր նման ախմախ չէ... եւ կը պաշտպանէ իր սեփական անվտանգութիւնը...: Ասոր երկու նախընթացները տեսանք արդէն՝ 29 Նոյեմբեր 1920 թուին (առաջին անգամ) եւ 1921 թուին (երկրորդ անգամ), Փետրուար 18-ի արկածախնդրութեան աւարտին, Ապրիլին, երբ Ալեքսանդրապոլի անվաւեր դաշնագրով՝ Թուրքիա խոստացած էր արկածախնդիր իշխանութեան՝ օգնութեան հասնիլ, եթէ՝ Կարմիր Բանակը միջամտած ըլլար...: Եւ Կարմիր



Բանակը միջամտեց, բայց թրքական բանակը օգնութեան չհասաւ արկածախնդիրներուն, քանի որ ինք ալ (Թուրքիան) ձեր նման ախմախ չէր...:

Եւ տակաւին. 1923 թուին, Ա. Հանրապետութեան գիտնական վարչապետը՝ Յովհաննէս Քաջազնունին, ձեր նման բոլոր ախմախներուն հանգամանօրէն բացատրած էր, թէ ինչո՞ւ Արեւելահայաստանը պէտք է որդեգրէ՝ ոչ թէ թուրքական, այլ՝ ռուսական օրինտացիա...:

Նոյն հարցադրումը կայ Լիբանանի ալ պարագային: Լիբանան, որ կը գտնուի Սուրիոյ եւ սիոնական տարատնկեալ պետութեան միջեւ, ի՞նչ օրինտացիա պէտք է որդեգրէ. սուրիակա՞ն թէ՛ սիոնական...: Ամէն ողջմիտ ու հայրենասէր լիբանանցիի համար, շատ որոշ ու յստակ է, թէ Լիբանան պէտք է որդեգրէ սուրիական օրինտացիա եւ ոչ թէ թշնամի սիոնական պետութեան օրինտացիան:

Թուրքիան թշնամի պետութիւն չէ՞՝ պարոնայք հակառուսականներ...:

Արեւելահայաստանի մէջ, ներկայիս, կրկնակի վատառողջ բեւեռացում մը կայ, քանի որ Նիկոլ Փաշինեանի թաւշեայ Շարժումը՝ յեղափոխութիւն մը չէր Գ. Հանրապետութեան օլիգարխիական համակարգին դէմ (որ խորապէս արմատակալած էր երկրին մէջ՝ ամբողջ մօտ երեք տասնամեակներու տեւողութեան), որուն արմատախլումը չէր կրնար իրագործուիլ՝ ոչ ամիսներու ընթացքին, ոչ ալ թաւշեայ յեղաշրջումով...: Երեկի օլիգարխիական համակարգի պարագլուխներն են, որոնք կը խափանեն Փաշինեանի իշխանութեան բարեկարգութեանց ուղին, մէկ կողմէ: Միւս կողմէ, Փաշինեան անհասկնալի եւ աններելի թեթեւօլիկութեամբ, ջուր կը տանի հակառուսական արշաւի ջաղացքին..., զոր կը չարաշահեն օլիգարխները, իր դէմ կարծրացնելու համար Մոսկուայի կեցուածքը. ինչ որ լրջօրէն կը վտանգէ երկրի անվտանգութիւնը: Այլ խօսքով՝ Փաշինեան ոչ միայն թիրախն է օլիգարխներու խափանումներուն, այլեւ՝ ինքն է ինքզինք խափանող...:

Եւ, այս շատ խիստ անկայուն վիճակը այնպիսի ժամանակ մը, երբ յաւելեալ կայ Գորոնայի մարտահրաւերը, ազերիական կարծրացումին վրայ... Եւ երբ արդէն գրեթէ կիսով անցած է Սեւրի Դաշնագրի եւ Ուիլսոնեան Իրաւարար Վճիռի դարադարձի տարին, եւ երկիրը ոչ մէկ աշխատանք կը տանի՝ պահանջելու համար դաշնագրի եւ վճիռի գործադրութիւնը:

Փաշինեան պարտի միշտ յիշել՝ Ժ-ԺԱ. Դարու Ապու Ալի Իպն Սինայի եւ Ի. Դարու Չապել Եսայեանի դիտարկումները: Իպն Սինա դիտարկած է. «Մենակութեան մէջ, մարդ չի կրնար գոյատեւել... իսկ այն ինչին, որ ան կարիքը ունի կրնայ ստանալ՝ հասարակութենէն միայն...»: Երեք կողմերէն շրջափակուած Հայաստան չի կրնար գոյատեւել մենակութեան մէջ...: Իսկ Չապել Եսայեանն ալ դիտարկած է. «Միայն ուրիշներ չեն որ կը խափանեն մեր ճամբան, այլեւ յաճախ, եւ անելի շատ՝ մեր անցեալի գաղափարները...»: Միայն օլիգարխները չեն որ կը խափանեն Փաշինեանի ճամբան, այլեւ՝ իր անցեալի հակառուսական գաղափարները...: Միայն թրքամետ գաղափարները չեն հակառուսական, այլեւ՝ բոլոր արեւմտամետ գաղափարները, ըլլան՝ ֆրանսամետ, բրիտանամետ կամ ամերիկամետ...:

Արեւմտաթրքամետ արեւելումը կործանարար է Արեւելահայաստանի համար, Պարոն Փաշինեան...:

ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ՊԵՂՐՈՒԹ



1 Յունիս 2020

## Տեսակէտ

### Ո՞Վ ՅԻՇԵԼ ԵՒ Ո՞Վ ՉՅԻՇԵԼ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՄԱՅԻՍ 28-ԻՆ

### ԱՐԱ ՄԱՆՃԵԱՆ

### (Դիմատետրի իր էջէն)



Մի քանի օր առաջ Ֆէյսպուքի վրայ «ՄԱՅԻՍ 28 ԵՒ ԼԻԲԱՆԱՆԱԳՅՅ ՄԱՄՈՒԼԸ» խորագրուած գրութիւնս ծաւալուն բանավեճի առիթ հանդիսացաւ:

Այդ գրութեան վերջաւորութեան բարձրացուցած հարցս թէ արդեօք տասնամեակներէ ի վեր գործնապէս Դաշնակցութեան քաղաքական ազդեցութեան տակ գործող Լիբանանի ազգային (այսինքն՝ հայ առաքելական) առաջնորդարանին իրաւասութեան ներքոյ եկեղեցիներէն երկուքը՝ Նոր

Յաննոյ Ս. Գեորգը եւ Ռըմէյի Ս. Յարութիւնը, որոնք մաս կը կազմեն Հնչակեան Կուսակցութեան ազդեցութեան գօտիին, պիտի ընդառաջեն իրենց վերադաս հոգեւոր մարմինի որոշման ու պատարագի ընթացքին կատարեն Գոհաբանական մաղթանք եւ Եռագոյն դրօշակի օրհնութիւն, արդէն ունի իր պատասխանը: Կիրակի օրը այդ երկու եկեղեցիներուն մէջ օրհնութեան արարողութիւնը փաստագրող երկու թուայնացուած լուսանկարներ մի քանի ժամ ետք ստացայ Հայկազեան Համալսարանի նախկին մէկ ուսանողուհիէս, որուն ընտանիքը հպարտ հնչակեաններ են: Երբ պատանի էի, այսպիսի բան պատկերացնել աներեւակայելի էր, եւ լա՛ւ է որ տեղի կ'ունենայ փոփոխութիւն, քանի որ քարացած քաղաքական կեանքն ու միտքը միայն վնաս կրնան պատճառել:

Բայց դեռ շատ անելիք կայ մինչեւ որ յետեղեռնեան հայ սփիւռքը յաղթահարէ Մայիս 28-ի՝ որպէս խորհրդանիշ տարբեր ընկալումներուն միջեւ ամբողջ եօթանասուն տարի գոյացած վիճը, մանաւանդ որ՝ այդ մասին բանավեճը միայն պատահական ու ոչ համակարգուած ձեւով տեղի կ'ունենայ, ինչպէս օրինակ՝ եղաւ իմ գրութեանս առթիւ:

Այսօր դարձեալ պիտի փորձեմ ուշադրութիւն սեւեռել նոյն տօնին առթիւ Լիբանանի մէջ տեղի ունեցած մէկ այլ արարողութեան վրայ եւ անոր ընդմէջէն Նոր հարց մը բարձրացնել՝ կրկին անգամ յոյս տածելով, որ ան ձեւով մը կ'օգնէ որ ի վերջոյ յետեղեռնեան սփիւռքի մէջ 28 Մայիս 1918-ին մասին միասնական պատում կամ պատմում մը (récit կամ narrative իմաստով) գոյանայ:

«Ազգակ» կը հաղորդէ թէ «28 մայիսին Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան տօնին առիթով Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբէկեանը այցելեց հանրապետութեան երախտաւոր հայ մեծանուն գործիչներու շիրիմները՝ յարգանքի տուրք մատուցելու եւ ծաղիկներ զետեղելու համար:»

Լիբանանը չճանչցողներուն համար ըսեմ թէ այդ շիրիմները կը գտնուին Պուրճ Համուտի հայ առաքելական գերեզմանատան մէջ: Առանձին չեն, այլ այդ գերեզմանատան մէջ գտնուող ՀՅԴ պանթէոնը կը համախմբէ տասնամեակներու ընթացքին Լիբանանի մէջ իրենց հոգին աւանդած



բազմաթիւ վաստակաշատ դաշնակցական գործիչներ, ներառեալ՝ 1918-1920 թուականներու հանրապետութեան ականաւոր դեմքերէն հոյլ մը: Կիրակի օր եւս, այնտեղ կատարուած է նոյն տօնին առիթով մէկ այլ հոգեհանգստեան արարողութիւն՝ ներկայութեամբ Լիբանանի հայ առաքելական թեմի կաթողիկոսական փոխանորդին, քահանայ հայրերու, Լիբանանի մէջ Յայաստանի դեսպանին ու Լիբանանի մէջ դաշնակցական բազմաթիւ ղեկավարներու:

Յոգեհանգստեան արարողութիւն կատարելը վաղուց հաստատուած հայ քրիստոնէական աւանդոյթ է, որուն խորհուրդը կը յարգեն նոյնիսկ հայ ... գործնապէս աթէիստները:

Վերոնշեալ բանավեճին մասնակցած ինծի սիրելի ու յարգելի գործընկեր մը, որ միաժամանակ հպարտ դաշնակցական է, կը գրեր (նախադասութիւնը կրճատելու ժամանակ, քերականական փոքր պատշաճեցումներ կատարած եմ). «Մայիս 28ը ընդունիլ բայց անոր ղեկավար դեմքերուն դերակատարութիւնը անտեսել ինծի համար անընդունելի վարքագիծ է: Յոս ոչ միայն պատմական արդարութեան հարց է, այլ՝ այդ ղեկավարներու ընդմէջէն ազգային յանձնառութեան օրինակ մը տեսնել, այնպէս ինչպէս, օրինակի համար, Արժանթինի պարագային զօրավար Սան Մարթինն է, Ուրուկուայի՝ Արթիկասը և ԱՄՆի՝ Յիմնադիր Յայրերը (օրինակները գիտակցաբար բերի այսպէս կոչուած «նոր ազգեր»ու պարագայէն):»

Այս նախադասութիւնը սոյն գրութեան մէջ պիտի ընդունիմ իբրեւ անվիճելի մեկնակէտ եւ ըստ այնմ շարժիմ առաջ: Իմ յաջորդ հարցումս ու նշելիք պարագաս կ'առնչուի 28 Մայիս 1918-ի Յիմնադիր Յայրերու շրջանակի սահմանագծման:

Պատմական դէպքերու զարգացումով Յ. Յ. Դաշնակցութիւնը դարձաւ միակ քաղաքական կազմակերպութիւնը որ իր պարտականութիւնը սեպեց վառ գոյներով յիշել ու յիշեցնել 1918-1920-ի հանրապետութիւնը: Չարմանալի չէ, որ այդ տարեկան յիշատակումներուն ժամանակ, որ կը կազմակերպուէին Դաշնակցութեան կողմէ, յանուանէ յիշատակուելու արժանի համարուեցան միայն 1918-1920-ին պատասխանատու դիրքերու վրայ գտնուած դաշնակցական գործիչներ եւ ... մի քանի բարձրաստիճան անկուսակցական զինուորականներ:

Բայց եթէ կայ ցանկութիւն 28 Մայիս 1918-ի ամենամեայ տօնակատարութիւնները դարձնել համասփիւռքեան, ի՞նչ պիտի ըլլայ այդ պարագային Յիմնադիր Յայրերու ցուցակը: Կա՞ն այդ ցուցակին վրայ աւելցուելիք այլ կուսակցութիւններու ներկայացուցիչներ, օրինակ՝ Յայաստանի անկախութեան յայտարարութիւնը ստորագրած Ազգային Խորհուրդի ժողովրդական անդամները, Յայաստանի երկու օրէնսդիր ժողովներուն ժողովրդական, սոցիալիստ-յեղափոխական եւ սոցիալ-դեմոկրատ անդամները, Յայաստանի գործադիր իշխանութեան մէջ նախարարական պաշտօններ վարած ժողովրդականներ ու սոցիալիստ-յեղափոխականներ եւ այլն: Յնչակեան կուսակցութիւնը այդ օրերուն շատ հետեւորդներ չունէր Յայաստանի Յանրապետութեան տարածքին վրայ, բայց երբ 1920-ի Սեպտեմբերին սկսաւ քեմալական արշաւանքը, հնչակեանները իրենց ներկայացուցիչը ունէին բանակին ի նպաստ համաժողովրդական աջակցութիւն ապահովելու կոչուած միջ-կուսակցական մարմինին մէջ:

Ու վերջապէս գանք յատուկ մէկ պարագայի, որուն մասին երկու հարց կ'ուզեմ բարձրացնել: Լիբանանի մէջ թաղուած է նաեւ Արսէն Կիտուրը, որ աւելի ծանօթ է իբրեւ հնչակեան գործիչ, հեղինակ ու խմբագիր: Երբ 1919 Մայիս-Յունիսին, 12 արեւմտահայ ներկայացուցիչներ հրաւիրուեցան իբրեւ Յայաստանի Խորհուրդի անդամ, Կիտուրը այդ 12-էն մէկն էր: Կարճ ժամանակ ետք, այդ խորհրդարանը ցրուեցաւ, իսկ Յայաստանի կառավարութիւնը Կիտուրը ուղարկեց Իրաք իբրեւ ներկայացուցիչ՝ զբաղուելու համար այնտեղ ապաստանած, մեծ մասամբ



---

վանեցի գաղթականներու հարցով: Խորհրդայնացումէն քիչ ետք, այդ գաղթականներէն մի քանի հազարը հասան Յայաստան, իսկ Կիտուրը Իրաք մնաց մինչեւ 1930-ական թուականները՝ երբ իր ձախակողմեան հայեացքներուն համար, Իրաքի անգլիամետ կառավարութիւնը զինք արտաքսեց Լիբանան: Իբրեւ հնչակեան, Կիտուրը «հաշտուեցաւ» խորհրդային իրականութեան հետ, Խորհրդային Յայաստան դարձեալ այցելեց միայն 1958-ին՝ Վազգէն Ա. Կաթողիկոսի յիսնամեակի տօնակատարութեան ժամանակ եւ, ինչքան գիտեմ, առաջին սփիւռքահայ գործիչը եղած է, որ Յայաստանի մէջ պաշտօնական ճաշկերոյթի ժամանակ հրապարակաւ խօսած է Ղարաբաղի ու Նախիջեւանի մասին: Ինչեւէ:

Սփիւռքի տարածքին, կան ուրիշ շիրիմներ եւս՝ 1918-1920 թուականներուն Յայաստանի Յանրապետութեան ծառայած ու տարբեր կուսակցութիւններու անդամակցած կամ համակրած շարք մը գործիչներու: Անոնց մէկ մասը երբեք չհանդուրժեց խորհրդային վարչակարգը, իսկ ուրիշներ աստիճանաբար համակերպեցան ու նոյնիսկ «լեզու գտան» հայ համայնավարներուն հետ:

Յարցումս այս է: Պէ՞տք է Մայիս 28-ին Կիտուրի եւ իր նմաններուն շիրիմներուն ալ այցելել: Եթէ ո՛չ, ինչո՞ւ: Եթէ այո՛, ո՞վ պէտք է նախաձեռնէ ու համակարգէ այդպիսի նախաձեռնութիւն մը:





## Գրական-Մշակութային

### ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՎԱՐԴԱԲՈՒՐԵԱՆ ԵՐԱՁՆԵՐՈՒՄ

Ի՛նչ երազներով ես ճամբայ ելայ,  
Արեւ կար հրէ աչքերուս մէջ վառ,  
Սրտիս մէջ աշխարհն կարծես կը թնդար,  
Յոգիս երկի՛նք էր լուսավառ, պայծառ...

Փուշ ու տատասկներ ոտքս ճանկոռցին,  
Ամպրոպ ու կարկուտ տեղացին վրաս,  
Յազար նենգ դաւեր ու խարդաւանքներ  
Փորձեցին կոտորել ոգիս անվեհեր...

Սիրտս զգայուն ու փխրուն անչափ  
Յար արիւնեցաւ նետերէն սուրսայր,  
Բայց կամքս տոկաց, ոգիս աննահանջ՝  
Բի՛ւր բի՛ւր խութերէն վերեւ խոյացաւ...

Երազներս սուրբ տեսան տառապանք,  
Տագնապ ու թախիծ, խռովքներ անչափ,



---

Մերժեցին սակայն գունատիլ վիատ,

Ծիածանակերպ շողացին վրաս....

Երազնէ՛ր անմահ եւ վարդաբուրեան,

Գուցէ չհասնիմ ձեր լոյս եզերքին,

Բայց ձեր շողերը արեւաճաճան՝

Ձիս միշտ պիտ' դիւթեն խինդով ոգեկան...

Դուք թելերս էք լազուրին կապող,

Սանդղամատեր՝ երկինք բարձրացնող,

Որ ըմպեմ զուլալ ցօղը երկնային,

Որպէս սիրանիւթ անսեր աշխարհին...

13/4/2020

.....

ԵՐԳԵՐՍ ԾԱԽՈՒ ԶԵՆ

Ինձ զարդեղէն մի խոստանաք

Ձեր փուճ գանձէն խաբեպատիր,

Ձիս հմայողը խօսքն է իրաւ՝

Սիրտէն բխած ու սրտալիր...

Ինձի պէտք չեն տիտղոս ու փառք,

Թէ որ հոգիս կ'ուզէք գնել,

Ազատ հոգիս ճախրել կ'ուզէ,

Ճախրանքով լոկ ուրախանալ...

Գումարները ձեր աստղաբաշխ

Ձեր ծակ աչքը թող կշտացնեն,



---

Ձեր խեղճուկրակ արծաթին տեղ,

Չեմ վաճառեր հոգիս զուլալ..

Ձեր գովեստը անոնց տուէք

Որոնք սևանին սին գովքերով,

Ես իմ խիղճիս առջեւ կ'ուզեմ

Կանգնիլ հպա՛րտ ու անվրդո՛վ...

Իմ երգերս ծախոււ ի՛ր չեն,

Ո՛չ ալ ապրանք ակնահաճոյ,

Անոնք սրտիս տրոփիւնն են,

Աղաղակը վճիտ հոգւոյս...

5/2/2017

.....

ԹԱԳԱԺԱՅՐԻՆ ՅԵՏ

Փոխուեր է կեանքը, փոխուեր՝ աշխարհը,

Փոխուեր են մարդը եւ ժամանակը,

Սահեր-անցեր են կարծես տարիներ,

Ու մենք յայտնուեր՝ այլ աշխարհի մեջ...

Երէկ ամէն ինչ կը թուեր տարբեր,

Կեանքն է իր հունէն շեղեր, մոլորեր,

Սիրտերը հիմա՝ թէեւ մօտեցեր,

Բայց մարդը մարդէն խոյս կու տայ արդէն...

Միտքերը խառն են, քառս է կարծես,

Դուրսը խաղաղ է, ներսը՝ շփոթ է,

Ամէն ինչ յանկարծ տակնուվրայ է,

Մշուշ է, մեզ է ու միգամած է...



---

Ու մարդը հիմա ինքն իրեն հետ է,  
Կը խոկայ անվերջ, կը խորհրդածէ,  
Կ'ուզէ հասկնալ ու ներըմբռնել  
Թէ ինչո՞ւ կ'ապրի այս աշխարհիս մեջ...  
Եւ գուցէ հիմա առաջին անգամ  
Խղճին հետ զրուցէ մաքուր ու անկեղծ,  
Շարտէ դիմակն կեղծիքին ունայն,  
Ձեւին ու ծեսին եւ ցուցադրութեան,  
Լսէ սրտի տրոփն, զարկերակն անոր,  
Մե՛րկ կանգնի հոգւոյն առջեւ շիփ-շիտակ,  
Քանզի հասկցաւ որ մերկ հոգիով  
Պիտ' ապրիլ կեանքը արդար ու իրաւ...

5/5/2020

.....

ՀՈԳԻԻՍ ՀԵՏ

Տարիներուս բեռը թօթուած,  
Կ'ուզեմ խայտալ դեռ խօլաբա՛ր,  
Դեռ թռվո՞ւնք անհոգաբար,  
Պարմանանա՛լ, գարունանա՛լ,  
Երթա՛լ դաշտերն ու անդերը,  
Բոյր, թոյրերով յար արբենա՛լ,  
Թօթուե՛լ աշնան, ձմրան պաղը,  
Գարնան բանալ սիրտս դեռ տաք...  
Հոգիս անչափ սէր, գորովանք,  
Հուր ու կրակ ունի անմար,  
Տարիները չեն կրցած բնաւ  
Փոշի դիզել իր Էութեան...



Կը թեւածէ վեր մանրութեն,  
Իր հողեղէն պարունակէն,  
Չայեացքն յառած հորիզոնին,  
Բարձունքներուն անպարագիծ...  
Խաւարին մէջ՝ լոյսի շող է,  
Ձմրան ցուրտին՝ սրտի գոլ է,  
Տառապանքին՝ յոյս է անմար,  
Գորշ տաղտուկին՝ լուսէ երագ...  
Չոգիս ինչպէ՞ս պիտ' ծերանայ,  
Երբ կը զանցէ ժամ-ժամանակ,  
Սրտիս անանց գարունն է ան՝  
Բողբոջումով լուսավարար:

13/5/2020

.....

ՎԻՊԱԿՍ

Ու է՛ջ առ է՛ջ եւ տո՛ղ առ տո՛ղ  
Կեանքիս վիպակն ես գրեցի՝  
Լոյսով, ստուերով, մուճնուլոյսով,  
Արեւներով, սիրով յուռթի...  
Այնտեղ դրի երագներս,  
Կարօտներս, վառ յոյզերս,  
Սերերս բորբ, խոկումներս,  
Սիրտս տրոփուն, գորովանքս...  
Ամէն էջին ես փռեցի  
Արշալոյսներ լուսաճաճանչ,  
Աստղածորան երկինք յուռթի,  
Որ խորհուրդներ ունի պահած...



Ամեն տողին ես շաղ տուի  
Վարդեր չքնաղ ու հոտեւան,  
Որ հմայեցին սիրտն ուրիշին,  
Ինձ պահեցի փուշը միայն...  
Ամեն բառին ժպիտ դրի,  
Որ ճառագեց շողեր լոյսի,  
Լոյսն այդ սրտիս հուր կրակն էր,  
Որ այրեցաւ միշտ բոցակեզ...  
Եւ չգիտցայ թէ վիպակն այդ՝  
Իմ ապրա՞ծն էր, իսկակա՞նը,,  
Թե՞՞ յօրինած էի ես զայն  
Լրացնելու չապրուածը...

1/5/2020

.....

ԴՈՒՆ ՅՈՂ ՉԵՍ ՍՈՍԿ

Դուն հող չես սոսկ, իմ Յայաստա՛ն,  
Աննիւթեղէ՛ն ոգի մըն ես,  
Որուն մեջ դեռ կ'ապրին ու կան  
Յայոց դարերն Յայկեան օրէն,  
Շո՛ւնչը վսեմ մեր պապերուն,  
Որ կերտեցին քեզ հե՛ւք առ հե՛ւք,  
Շաղախելով բու բարերուդ  
Յօ՛ղ առ ցօ՛ղ քրտինքն իրենց,  
Յաւա՛տք ու սէ՛ր, բիւր երազնե՛ր,  
Կա՛մք անկոտորում ու աներեր,  
Յոլանքը ցինջ իրենց հոգւոյն,  
Տենդ ու տենչեր հազարանուն...



---

Կարծես մենք ենք թեզ յօրիներ,  
Յիւլէ՛-հիւլէ՛ հոգի դըրեր  
ՄԷՆ մի ժայռիդ, մԷՆ մի ծերպիդ,  
Սարալանջիդ, հարթավայրիդ,  
Վեհ լեռներուդ, հովիտներուդ,  
Ձուրերուդ մէջ, գետակներուդ,  
Որ դուն դառնաս մեզ հոգետո՛ւն,  
Օճա՛խ անգին, մեր Էութի՛ւն,  
Որմէ եթէ մենք անջատուինք  
Կը դառնանք բոյս արմատախիւ,  
Փերեզակներ թափառ՝ շրջիկ՝  
Անտուն, անդէմ ու անպատիւ,  
Արարածներ ողորմելի:

5/5/2019

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Գրական-Մշակութային

### ԴԺՈՒԱՐ ՕՐԵՐ

### ՊԵՐՃՈՒՀԻ ԱԻԵՏԵԱՆ



1939-ը թուականի ամառը հասած էր աւարտին, բերքը առատ էր, ընտանիքն ու գործաւորները հեւ ի հեւ աշխատած էին, պաշար ամբարած: Նահապետական կարգ էր բաց սեղանը, գործաւորներու արդար բաժինը բերքէն ու ձմեռնամուտի պատրաստութիւնը:

Այդ տարին աշնանամուտը արտասովոր եղաւ, գիւղը յանկարծակի շրջապատուեցաւ ժանտարմաներով ու

հնչեց արտաքսման կոչը:

«Տէ՛, գացէ՛ք, բաւական է որքան վայելցոյ՞ք այս հողին բարիքները...Փառք տուէք, որ կառքով կը ճամբենք ձեզ, ապահո՛վ... Փառք տուէք Աստուծոյ, յիշեցէ՛ք, յիշեցէ՛ք սաֆարպէիքը, ջարդերը...»:

Կառքին մէջ տեղաւորուեցաւ ընտանիքը: Մարին դատարկ զամբիւղը ձեռքը նայեցաւ մեծ մօրը:

Նարնջենիներու ճիւղերը առատ պտուղներու բեռին տակ կքած էին, տէրերուն արտօնուած չէր քաղել: Գրաւողները տիրացած էին ամէ՛ն ինչի... ամէ՛ն ինչի:

Ֆրանսան ծախած էր Աղէքսանդրէտը (Իսկանտարուն), բնակչութիւնը կազմող իւրաքանչիւր անձի համար հատուցում վճարելով մէկ օսմանեան ոսկի: Մեծ պետութիւններու միջեւ կնքուած համաձայնութիւն էր, հպատակները պարտաւոր էին հնազանդի:

Մեծերը մօտ քառորդ դար առաջ աքսոր ու ջարդ տեսած էին, Հասանալէյէն քալած էին անիծեալ ճամբով, եկած ու հաստատուած՝ Սուրիական հողի այս բաժնին վրայ: Հիմա այս հողաբաժինն ալ անհասկնալի կերպով կը շնորհուէր թուրքերուն:

Թուրքիան համաշխարհային առաջին պատերազմէն ամօթալի պարտութեամբ դուրս եկած պետութիւն էր, ինչո՞ւ այս գնահատականը:

Մարի դատարկ զամբիւղը, որ պարտեզի միրգերով լեցուն կ'ըլլար, երկարեց առաջ, կառքը քաշող եզը ցնցուեցաւ, զամբիւղը ինկաւ կառքի անիւներուն տակ, ճզմուած, ծոմռած մնաց ճամբեզրին: Մարի կծկուեցաւ մեծ մօր կողքին, այնքա՛ն սարսափած էր մտրակը ձեռքը եզը խթանող ժանտարմային դաժան նայուածքէն:

Նարնջենիներուն ճիւղերը ցանկապատային իրենց սահմաններէն դուրս կախուած՝ հասուն նարինջներու բերքով, կը խայտային, կը փնտռէին իրենց տէրերուն հոգատար ձեռքերը:





Փոշին կառքի անիւներուն տակէն բարձրացաւ եւ արագաշարժ շուքի վերածուելով հետեւեցաւ իրենց: Միւս կառքերը եւս կը շարժէին, իւրաքանչիւրը իրեն բաժին ինկած փոշին տանելով ետեւէն:

Պտղատու ծառերուն շարքերը աստիճանաբար փոքրացան ու անհետացան... մնացին հոն, այն հողին վրայ, որ նուիրաբերուած էր Նոր տէրերու:

Մեծ մայրը խաչակնքեց, մայրը սրբեց արցունքները, հարս ու կեսուր հազիւ կրցած էին իրենց ոսկեղէնը եւ քանի մը ծրար վերցնել իրենց հետ, նեղ օրեր պիտի դիմագրաւէին:

Նորածին քոյրը՝ Պերճուհին լացաւ, մայրը սեղմեց զայն գիրկը ու ամօթխած հանեց կուրծքը. Կարապետին գլուխը ինկաւ մեծ մօր թելին վրայ, կառքին ճօճումները խաղաղ քուն պարզեցեցին անհանդարտ տղեկին.

- Լաւ որ Աղան գնաց, այս օրերը չտեսաւ, տունը-տեղը, դրախտի պէս պարտեզը առին այդ անիրաւները,- փղծկեցաւ մեծ մայրը:

Մարի դիտեց Նորածին քոյրիկը, որ անյագօրէն կը ծծէր մօր կուրծքը:

Կառքին փոքր պատուհանին սահմաններուն մէջ, գորշ երկինքին վրայ լուսնի մահիկը պահ մը երեւցաւ ու անհետացաւ: Կայծակը փայլատակեց, որոտումը թնդաց... յորդ անձրեւը ծեծեց կառքին տանիքը, կաթիլներ խուժեցին ներս:

Մեծ մաման գրկեց վախէն դողդուցող Մարին, անոր գրկին մէջ թարմ հացի հոտ կար.

- Նէնէ անօթի եմ,- փսփսաց Մարի:

- Հա՛ ձագուկս, տամ հաց, քիչ մըն ալ համբերե,- մեծ մօր խորշումած ձեռքը ծրարին մէջէն հանեց հացի կտորը ու երկարեց Մարիին:

- Կեր ձագուկս,- խռպոտ ձայնը խեղդուեցաւ որոտումի դղրդիւնին մէջ:

- Մի՛ վախնաք, շուտով Հալէպ կը հասնինք,- խրախուսեց հօրը ձայնը:

Մթութիւնը աստիճանաբար կը սողոսկեր, կը թանձրանար... հօրը ծանր ձեռքը խանդաղատանքով շոյեց Մարիին գլուխը:

Կառքի առաստաղը ծեծող կարկուտը կը նախագուժեր գաղթական ընտանիքին գլխուն վրայ ճօճուող պատուհասը:

\* \* \*

Կառքերը կանգ առին նեղ թաղի մուտքին, եկեղեցիի մը դրան առջեւ:

Բարի աչքերով մարդիկ մօտեցան, առաջնորդեցին զիրենք հսկայ սրահ մը, հաց եւ տաքուկ ծածկոցներ բաժնեցին:

Մեծ մայրը մոմ տուաւ Մարիին, ձեռքը բռնեց ու մտան եկեղեցի: Ան ձեռքերը տարածած աղօթեց: Պատերուն վրայ դրոշմուած սրբանկարներու լուռ, սառած նայուածքները քաջալերական ոչինչ կը թելադրէին: Իսկ ամենասարսափազդուն ներքին պատի հսկայական



պատկերի սատանաներն էին, անոնցմէ մեկը... բերնէն բոց ու կրակ ժայթքեցնող ահաւոր սաթայելը, գրկած էր փոքրիկ մը, ճիշդ Մարիին տարիքին:

- Մենք միայն Աստուծոյ կը վստահինք,- ըսաւ մեծ մայրը:

Մարի կրկին աչքերը յառեց սատանաներուն նկարին, ուր սուրբեր եւ հրեշտակներ ալ կային, բայց զարմանալիօրէն սատանաները գրաւած էին ուշքը, կը դողդղար...

-Աստուած պապան կը պատժէ չարերը, իսկ բարիներուն ահա այդ գեղեցիկ դրախտին մէջ տեղ կու տայ,- բացատրեց մեծ մայրը նկատելով թռռնիկին զարհուրանքը:

- Մեր պարտեզը դրախտի չափ գեղեցիկ է կ'ըսէիր ...- բացազանչեց Մարի մանկական ընդվզումով:

Մեծ մայրը տխուր գլուխը օրօրեց.

- Մեր պարտեզը այս դրախտէն աւելի գեղեցիկ է,- կրկնեց Մարի անդրդուելի եւ ինքնավստահ, նկարը մատնանշելով:

- Այդ հողերը այլեւս անհաւատներուն ձեռքը մնացին, այդ արիւնարբու ազգը չկշտացաւ մեր ունեցածը յափշտակելէ,- միթմիթաց մեծ մայրը:

- Նէնէ... ուրեմն Աստուած պապան թող պատժէ իրենց, ինչո՞ւ մեր դրախտը առին:

Մեծ մայրը չպատասխանեց, քաշեց ձեռքէն ուղղուելով դէպի ելքի դուռը, մինչ Մարիին Նայուածքը կառչած մնաց փոքրիկը գրկած սատանային կարմիր երախին ու դժոխքի կարմիր-կարմիր բոցերուն:

Պատկերները խառնուեցան, դրախտի նման իրենց պարտեզին սեմին կանգնած զէնքերով, լայն ու լայիրջ ժպիտներով ժանտարմաները այդ սատանաներուն այնքան նման էին:

Եկեղեցիի սրահին մէջ իրենց տուններէն դուրս շարտուած Աղէքսանդրէտի շրջանի հայ ընտանիքներ, իւրաքանչիւրը կարպետ մը փրած, գետինը ժամանակաւոր տեղաւորուած էին: Օրէ-օր վիճակը կը բարդանար, նորեր կը ժամանէին:

Մայրը գաղտագողի քակեց ծոցի ծրարը ու ոսկի մը երկարեց ամուսնոյն:

Յաջորդ օրը Սահա հայաշատ շրջանի արաբական բակի մը մէջ, հայրը վարձով երկու ընդարձակ սենեակներ ապահոված էր... ընտանիքը լծուած էր գործի, մեծ մաման հորէն ջուր կը քաշէր, Մարին՝ նոյնիսկ հագիւ քայլերը հաւասարակշռող Կարապետը ջուրով լեցուն փոքրիկ դոյլերը կը հասցնէին մամային:

Իրիկունը ընտանիքը գետինը սփռուած «լաթէ սեղան»ին շուրջ հաւաքուած կը ճաշակէր ընթրիքը:

- Տղա՛ս, մէկ սենեակ կը բաւէր մեզի, նեղ օրեր են..

Չայրը խեթ նայեցաւ մօրը ու պատառը կու տալով անկիւն մը քաշուեցաւ:



Մայրը իրաւունք ուներ, նեղ օրերը փակ դրան ետեւ պահուողտած գողի նման կը սպասէին: Ամիս մը ետք միւս սենեակը պիտի յանձնուէր այլ գաղթական ընտանիքի մը, լաւ դրացի ունենալու եւ նեղ օրերը դիմագրաւելու հեռանկարով:

Հայրը գործ կը փնտռէր, հողի մարդ էր, բահ ու բրիչ բռնող, այս քաղաքին մէջ ի՞նչ աշխատէր:

Օր մըն ալ ծանրոցներով, համով ուտելիքներով, զինուորական տարագով մտաւ տուն:

- Ֆրանսական բանակին զինուոր արձանագրուեցայ, այլեւս ամսական ունիմ, հանգիստ կ'ապրինք:

Մեծ մայրը խաչակնքեց, մայրը անորոշ, ծամածուռ ժպիտ մը գծեց շրթունքներուն վրայ:

- Ի՞նչ, չհաւնեցա՞ք, հապա ամէն շաբաթ մուրացկանի նման ձեր փէշէն ոսկի մը առնեմ տանիմ ոսկերիչ Արթինին... դուք կը հասկնա՞ք վիճակս, կը հասկնա՞ք ինչ կը զգամ:

Հայրը ծանրոցները թափով դրաւ սեղանին, մշիկ-մշիկ քնացող աղջնակը ցնցուեցաւ ու սկսաւ ճչալ: Փոքրիկ Կարապետը վազեց ներս ու հիացած նայուածքով փարեցաւ հօրը:

- Պապա՛, պապաս քաջ զինուոր,- հագիւ թոթովեց:

- Ինձոր.. ինձոր,- Մարին ձեռքը երկարեց տոպրակին:

Մեծ մայրը փակեց դուռը ու անխօս եփած ճաշի կաթսան դրաւ յատակին, արդէն ճաշելու յատուկ ծղոտէ կլոր «թափիր» ունէին:

- Տղա՛ս, մենք աքսոր տեսած ենք...- փորձեց մեղմացնել:

Մայրը գրկեց փոքրիկը ու սկսաւ կերակրել: Մարին եւ Կարապետը ճաշը ծամելով անկուշտ կը դիտէին հօր նոփս նոր, փայլուն կոճակներով համազգեստը: Աշխարհի վրայ իրենց հօր նման շէկ, լայնաթիկունք ու քաջ պապա չկար:

Հայրը թելադրեց հաւաքել իրերը Մունպուրճ երթալու, զինուորի ընտանիքը թափառական կեանքով կ'ապրէր հետեւելով բանակի գերագոյն հրամանատարի հրամանին:

- Տղա՛ս, ես աղջկանս տունը կ'երթամ, իմ տարիքիս տեղէ-տեղ թափառիլը դժուար է:

Հայրը լուռ մնաց, հաւանութեան նշան էր:

\* \* \*

Մունպուրճ քաղաքին մէջ շրջան մը ապրելէ ետք, տան սակաւաթիւ իրերը հաւաքեցին, ուղղուեցան դէպի երկրի հիւսիսարեւելքը:

Ֆրանսական բանակին ծառայող զինուորները, մեծ թիւով հայեր, հաստատուած էին Ռաս ուլ Այն (աղբիւրի գլուխ) փոքրիկ գիւղաքաղաքին մէջ:

Հողածածկ փողոցներ ու արաբական բակեր, բակերուն մէջ ուս-ուսի տուած սենեակներ, իւրաքանչիւր սենեակի մէջ ծուարած ընտանիք մը: Բոլորը մէկ սիրտ, մէկ հոգի, բոլորը աքսորի, չքաւորութեան ու տառապանքի երկրորդ սերունդ... այդ տառապանքը մաշած, բայց ազնուացուցած էր հոգիները:



Բակերը փոքրիկներուն խաղավայր, մայրերուն հաւաքատեղի էին, մինչ զինուոր հայրերը արտնին հոգերը վստահած մայրերուն ու մեծ մայրերուն, որպէս կարգապահ ծառայողներ պարբերաբար միայն կրնային այցելել իրենց ընտանիքներուն:

Մարին ու փոքրիկ եղբայրը Կարօն խառնուած բակի փոքրիկներու խումբին կը վայելէին երջանիկ մանկութիւն, նոյնիսկ երբ մեծերը փսփսուքով ու խոժոռ դէմքերով խօսէին պատերազմի մասին:

Աշնանային առաւօտ էր, քամին կը հաւաքէր փոշոտ քաղաքի առատ փոշին ու ՅՈՒՆԻՍ 2020 սուրալով կը փչէր աջ ու ձախ:

Քամի՞ն էր, թէ լրաբերը ուժգին թակեց բակին դուռը, Թրվանտա մամիկը՝ բակի կիներու ամենատարեցը, խոնջած սրունքներուն վրայ շորորալով, աջ ձեռքը կողին, ձախով կոնքը շփելով հասաւ սեմին, զինուորական մըն էր դրան առջեւ խեղճուկ սպասողը: Բոլոր սենեակներու դռներէն գլուխները առաջ երկարեցան... պատերազմը սկսած էր, ամուսինները ամիսներով կը բացակայէին, արդէն սեւ լուրեր կու գային:

Սեւ լուրը աներեւոյթ սուրի նման կը կախուէր ընտանիքի գլխուն եւ նիւթական, հոգեկան անտանելի վիճակը իր յորձանքին մէջ կ'առնէր գայն՝ զոհուողին կինն ու զաւակները մատնելով խոր դժբախտութեան:

Սեւ լուրը Կիւլէնիայի ընտանիքինն էր:

- Կիւլի՛ւ, աղջիկս, ամուսինդ շատ բարի մարդ էր, դրախտ գնաց:

Թրվանտա մամիկը մխիթարական խօսքեր կը փնտռէր:

- Աստուած իմ, երեք որբունկներով ինչ պիտի ընեմ, ուր տարիք ամուսինս: Այդ գազան թուրքերը սիրէ... հա՛, այդ գազաններուն դժոխքիդ մէջ տեղ տուր, մենք պէտքը չունինք դրախտիդ,- մայրը փետտեց մազերը:

- Մեղա՛յ իմ, Տէր, ինչե՛ր կը խօսիս աղջիկս, մեղա՛յ, մեղա՛յ,- Թրվանտա մամիկը գրկեց մօր ուսերը ու լացաւ, լռելեան իրաւունք տալով անոր:

Դրացիները մէկ մարդու նման կեցան իրենց կողքը, բոլորը սգակիր էին, նոյնիսկ փոքրիկները հրաժարած էին խաղալէ: Բակին մէջ քար լռութիւն կը տիրէր, պիտի սպասէին պաշտօնական թաղումին, ո՛չ դազաղ կար, ո՛չ... դիակ:

«Թաք, թաք, թաք»:

Ուշ գիշերին դրան թակոցը արձագանգեց բակին մէջ, Թրվանտա մամիկը ձայն տուաւ.

- Խէր ըլլայ, նորէ՞ն ինչ կայ...- վերցուց լապտերը ու վախով խելով ձայն տուաւ:

- Այս ժամուն ո՞վ է...

- Մի՛ վախնաք, ես եմ, Պաղտասարը:

- Յիսուս Քրիստոս, դուն, դուն...- կակազեց Թրվանտա մամիկը, լապտերը ձեռքին ուղղուելով դէպի դուռը:



Դրան շեմին զինուորի տարագով հայրիկն էր տժգոյն, տառապած աչքերով, բայց երջանիկ:

Բակի սենեակներուն դռները կամացուկ ետ գացին ու շուքերը անշարժացան:

Մայրը ցնցուեցաւ, խաչակնքեց, մոռնալով պահպանողական օրէնքները, անտեսելով ներկաները, փաթթուեցաւ ամուսինին վզին, Թովանտա մամիկը արագ փակեց սենեակին դուռը:

- Քա՛, ինչ սառեր կեցեր էք, ամէն մարդ իր սենեակը... ամօթ է քա՛:

Երագ չէր, հորը ձեռքին վիրակապ կար, Աստուած պահած էր զինք, գրոհելու հրաման էր, կողքի երկու զինուորները ինկած էին ձիերէն ու... մինչ իր ձին ծառանալով սուրացած էր կրակի մեջէն դուրս քաշելով զինք:

- Իմ ապւանս, հիմա ան ալ բուժումի պետք ունի,- տխուր կը պատմեր հայրը:

Յրաշք էր, բայց ընտանիքը ուրախութիւնը բարձրաձայնելու իրաւունք չունէր, կողքի բակին մեջ միւս երկու զինուորներուն սեւ լուրը հասած էր հօր լուրին հետ:

- Պա՛պ, ինձի ալ հետդ տար,- կը թախանձեր Կարօն:

Յայրը շոյեց տղուն գլուխը, աղջնակին ու Մարիին սեղմեց կուրծքին ու կնկան ձեռքին մեջ զոյգ մը ոսկի դնելով ըսաւ.

- Կիւլիւ... զաւակներս բանէ մահրում չընես, քանի մը ամիսէն կրկին արձակուրդի կու գամ:

Պատերազմի շրջանին զինուորներու ընտանիքները մասամբ բախտաւոր էին, պարէն կը ստանային, ամսական ունէին... բայց ինչ բախտաւորութիւն, երբ սեւ լուրը սեւ քօղով կը ծածկէր ամէն ինչ:

Ահաւոր է պատերազմը, համաշխարհային պատերազմը, դաշնակից պետութիւններ համաձայնագրերով կը վաճառեն իրենց հպատակներուն կեանքը, ժողովուրդը կը հեծէ զոհեր տալով, սով ու զրկանքներ կրելով:

Առաջին համաշխարհային պատերազմի սերունդի զաւակներն ու թոռները, որոնք իրենց հողերէն դուրս շարտուելով, ջարդուելով, կոտորուելով հասած էին այս երկիրը, կը ներգրաւուէին երկրորդին մեջ, վասն ինչի՞, ինչո՞ւ կը կռուէին այս զինուորագրուած հայերը: Պարզապէս գոյատեւելու, իրենց ընտանիքի օրուան հացը ապահովելու սիրոյն զինուորագրուած այս հայորդիները: Այս խառնակ օրերուն հազարապետին շունը աւելի բախտաւոր էր քան հասարակ երկրացին:

Գարուն էր, հայրը եկաւ ձիուն վրայ հեծած: Ձին գեղեցիկ էր ու հայրը իր զաւակներուն չափ կը սիրէր իր կեանքը փրկած ձին: Ամէն առտու խրոխտ ու երջանիկ հեծած ձիուն վրայ, աղբիւրի մօտ ուր կը հաւաքուէին արձակուրդի եկած միւս զինուորները, զբօսանքի կը տանէր սիրելի իր աղջնակը:

Պատերազմը դանդաղ քայլերով պիտի ուղղուէր դէպի աւարտ, բոլորը լաւատես էին չիմանալով թէ ինչքա՞ն զոհողութիւններ ու զոհեր եղած էին, չիմանալով թէ աշխարհի մեծերը ինչ գաղտագողի համաձայնութիւններ ու զիջումներ ըրած էին:



Չհնուորներու ընտանիքները աւելի երջանիկ էին, վտանգաւոր օրերը պիտի չբուէին... մօր աչքերուն մէջ այլ թացութիւն կար, երջանկութեան փայլքը, որ սակայն...

Ո՞վ չհանդուրժեց ընտանիքի երջանկութիւնը:

Յայրը քանի մը օր ետք հիւանդացաւ:

Այդ գիշեր, երբ հայրը տաքութեան մէջ կը գառանցեր ու կը դողար, մայրը շուարած թրջոցները կը փոխեր, ախոռէն կը լսուէր ձիուն վրնջիւնը, ան անհանգիստ կը դոփեր գետիկը:

Գիւղի միակ բժիշկը գլուխը օրօրեց, ախտը թունաւոր էր, անկարելի էր կանխել:

Մարի աչքերը ամուր փակեց ու ճչաց... երկար պոչով ու կարմիր երախով սաթայելը ցցուած էր իրենց սենեակին դրան առջեւ: Մայրը եւս կը ճչար: Յօր ապակեայ Նայուածքը ափսոսանքով գամուած էր գորշ պատին:

- Գնաց... գնաց,- ծունկերուն զարկաւ մայրը:

Բակի սենեակներէն բոլորը փութացին օգնութեան, բայց ոչինչ կարելի էր ընել...

- Եաւրում... պապադ շատ բարի մարդ էր, դրախտ գնաց,- ըսաւ Թրվանտա մամիկը շոյելով Մարիի գլուխը:

Այսինքն հոն՝ ուր մնաց իրենց տունը, պարտեզը, որ նման էր դրախտի... հոն կը թեւածէր հօրը հոգին:

Այդ օրերուն հազարաւորներ կը սպանուէին պատերազմի ճակատի վրայ.. յետոյ կու գային Նորերը զինուորագրուելու: Ֆրանսական բանակին մէջ զինուորը անուն չէր, այլ թիւ... ու թուաբանական օրէնքներով բանակէն ոչ թէ Պաղտասարը այլ թիւ... զինուորը պակսած էր... ան ալ ոչ թէ պատերազմի դաշտին վրայ, այլ արծակուրդի ընթացքին թունաւոր ախտէն մահանալով:

Թուրքի նման անողոք էր հօր կեանքը խլող ախտը:

Դժուար օրեր էին:

4/2020 Երեւան

## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Մարդկային հոգի՛ն, մարդկային հոգի՛ն....Ո՞վ պիտի կարենայ պեղել զայն, ո՞վ պիտի կարենայ ճանչնալ զայն իր ամբողջ խորութեամբ, Նրբութեամբ, զգայնութեամբ, իր տիեզերաշունչ ընդգրկումով, ուր կը ծիածանուին համակ կեանքի, բնութեան, տիեզերքի երանգները, բոյրերն ու թոյրերը....ուր կան խորխորատները մարդկային տառապանքի, ցասումի, ըմբոստութեան....եւ վեհացումները անոր ցնծագին ապրումներուն, երազներուն, ազնուութեան, գեղեցկութեան խորապրումներուն....Խորապէս Նիւթականացած, անհոգի դարձած աշխարհին մէջ, մարդկային հոգին ճանչնալը կը մնայ վսեմագոյն մարտահրաւերը՝ մարդանալու ճանապարհին վրայ...

.....

Ցաւեր կան՝ լուռ, այրող, որոնց մասին չես ալ ուզեր խօսիլ, բայց սիրտդ կը խռովեն անոնք, լուռ կը տառապիս, կը մորմոքիս....մենութեանդ մէջ կ'արտասուես, իսկ մարդիկ՝ տեսնելով ժպիտդ, երբեք չեն կրնար թափանցել հոգւոյդ խորը, չեն կրնար զգալ սրտիդ ճենճերումը....Մարդ էակը միշտ ալ առանձին է իր բուն տառապանքին մէջ, որ կեանքի խորախորհուրդ էութիւնն իսկ է... զոր կը փորձենք յաղթահարել գեղեցիկ պատրանքներով..

.....

Ազնուութիւնը գերագոյն առաքինութիւնն է մարդ էակին...ազնիւ վերաբերմունք դրսեւորել բոլորին հանդէպ, նոյնիսկ՝ անոնց հանդէպ, որոնք անազնիւ եւ թշնամական վերաբերմունք ունեցած են մեզի հանդէպ...իսկական վեհանձնութիւն : Վերջապէս ուրիշին արարքը չէ, որ պետք է պայմանաւորէ մեր ազնուութիւնը, որ պետք է ազատօրէն փայլի ամենուր եւ ամենուն Նկատմամբ...

.....

Ուրախութիւնը ուրախութիւն չըլլար, եթէ զայն չկարենաս բաժնել այլոց հետ....Բարին իր բուն իմաստը կ'առնէ այլոց հետ ճիշդ ապրելու ընթացքին մէջ....Ամէն առաքինութիւն ունի իր ընկերային պարունակը....Մարդը մարդով, մարդուն հետ միայն կրնայ լիաթոք ուրախանալ, երջանկանալ, ներքնապէս հարստանալ.. Կեանքը անապատ է առանց սիրոյ, բարութեան, ազնուութեան, որոնց հասցեատերը դարձեալ եւ դարձեալ մարդն է...

.....



Լռութիւն կայ խորախորհուրդ, ուր միտքեր կան թաքնուած, ծալ-ծալ շերտերով բազում, միտք-ապրումներ յուզա-իմացական լիցքերով բեղուն, որոնց լեզու տալը, զանոնք խօսք ու գիրի վերածելը այնքան բան պիտի զեղչէր անոնց խորհրդաւորութենէն, վեհութենէն, բազմիմաստ հարստութենէն... Խօսուածն ու գրուածը լոկ մակերեսն են ամբողջականօրէն զգացուածին ու մտածուածին...

.....

Երբ սիրես մէկը, անոր մէջ կը բնակիս... Երբ սիրես ընտանիքդ, անոր մէջ կը բնակիս... Երբ սիրես ազգդ, անոր մէջ կը բնակիս... Երբ սիրես մարդկութիւնը, անոր մէջ կը բնակիս... Երբ սիրես բնութիւնը, տիեզերքը, անոնց մէջ կը բնակիս... Եւ կ'ընդարձակուիս, կը շատնաս, կը բիւրապատկուիս... սիրտդ կը դառնայ տիեզերքը համակ... Սա չէ՞ տիեզերական ՍԷՐՆ ԱՌԱՍՈՒԱԾ...

.....

Փոթորիկէն ետք է որ կը գնահատենք խաղաղութիւնն ու անդորրը, յոգնատանջ աշխատանքէն ետք՝ հանգիստը, կարօտակեզ սպասումէ ետք՝ հանդիպման վայելքը... Եւ այսպէս, կեանքը վերիվայրումներով է որ կ'իմաստաւորուի, կ'արժեւորուի... մինչ նոյնանման, միագիծ ու միալար կեանքը լճացում ու ճահճացում է, որ հոգեկան աշխարհի մահուան կ'առաջնորդէ... Կեանքը միշտ ալ պայթարով կը հաստատէ ինքզինք... Մշակոյթը եւս ոգիի պայթար է, ստեղծագործելու թռիչք ու ճախրանք: Վա՛յ այն մարդուն, որ երբեք չուզեր դուրս ելլել առօրեայ կեանքի միօրինակութենէն, միապաղաղութենէն, ուր հոգին ու ոգին կը ժանգոտին՝ կորսնցնելով իրենց յուզա-իմացական ապրումներու ալեկոծումն ու կենսունակութիւնը...

.....

Առօրեայ հանգիստի եւ սովորականութեան գօտիէդ եթէ ջանդգնիս դուրս գալ՝ դէպի անծանօթն ու անսովորը, յանդգնիլ դէպի նոր հորիզոնները մտքի, գաղափարի..., յայնժամ կը լճանաս, կը ճահճանաս՝ մտքով ու հոգիով... Մարդ արարածը միշտ ալ Էական կարիքը ունի նոր գրգիռներու, խթանելու համար իր կարողութիւններն ու կարելիութիւնները, վերակենսաւորուելու եւ վերանորոգուելու համար...

.....

Իւրաքանչիւրիս կեանքը արդիւնքն է մեր ընտրութեան, մեր ազատ կամքի արտայայտութեան՝ այս կամ այն կերպով... Բայց քիչ չէ նաեւ պատահականութեան խաղցած դերը մեր ամէն մէկուն կեանքին մէջ... Պատահականօրէն կը ծնինք, պատահականօրէն կը յայտնուինք այս կամ այն երկրին, միջավայրին, շրջապատին մէջ... Պատահականօրէն կը հանդիպինք այս կամ այն անձին, անձերուն... Եւ այսպէս շարունակ... Մեզմէ կախեալ է, սակայն, թէ ինչպէս կ'իմաստաւորենք, կ'արժեւորենք եւ կ'արդիւնաւորենք այդ պատահականութիւնները...

.....

Դժուար է մարդ ըլլալը, այլոց տառապանքը բաժնելը, այլոց ուրախութեամբ ուրախանալը, այլոց մտահոգութիւնները իրենը համարելը, քանզի ճշմարիտ մարդը անանձնական է մասնաւորապէս... Ան սրտով կը զգայ ուրիշին ցաւը, երջանկութիւնը, սրտով կը զգայ անոր մեղքերը, մեղաւորութեան զգացումը... Եւ կը խուսափի ուրիշը մեղադրելէ, քանզի ան կը





---

հասկնայ, սիրտով եւ միտքով, որ մեզմէ մասնիկ մը կայ բոլորին մէջ եւ ուրիշէն մասնիկ մը կայ մեր բոլորին մէջ...

.....

Որքա՛ն դժուար է ամբողջովին հասկնալ մարդը, որ շատ անգամ կը մնայ անծանօթ Նոյնիսկ իբն իրեն....Բառ մը կը որսանք շատ յաճախ եւ սխալ եզրակացութիւններ կ'ընենք...հայեացքի մը ետին ինչե՛ր կրնան թաքնուած ըլլալ... Ժպիտը երբեմն կը ծածկէ խորունկ ցաւ մը, Նոյնիսկ ողբերգութիւն մը....Հապճեպ դատումներ ընելը սխալ տեղ կրնայ առաջնորդել մեզ շատ յաճախ... Մարդը հասկնալու համար շատ ակելի էական է զայն խորզալը, սիրտէ-սիրտ հաղորդակցութիւնը, որ բառերէն ու խօսքերէն ակելին է... Առանց զգալու մարդը, չես կրնար հասկնալ զայն...

.....

Շատ քիչեր կրնան ձեռքբերել ու ապրիլ մտքի անկախութեան առաքինութիւնը....Ժողովրդավար կարգերու մէջ անգամ, համատարած է մտքի բռնատիրութիւնը..., երբ յանուն աթոռի, դիրքի, պաշտօնի եւ ծափահարութեան, թէ այլեւայլ տեսակի շահերու՝ մարդիկ կը յարմարին կամ տուրք կու տան որոշ գաղափարներու, լոզունգներու եւ կացութեաններու....առանց հարցադրելու եւ քննարկելու անոնց հիմքը...եւ տակաւ յարմարուելով...կը կորսնցնեն իրենց ներքին ազատութիւնը, որ մարդ էակին գերագոյն արժանաւորութիւնն է...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

### ՔԱՌԵԱԿՆԵՐ



Թէ գիրդ մրոտեն, մի՛ վհատիր,  
Վստահէ՛ քու ներքին ուժիդ,  
Թէ անկեղծ է գիրը սրտիդ,  
Ան անպայման կը կարդացուի..

.....

Դիմակը կեղծ շուտ կ'իյնայ վար,  
Կեանքի հովերն երբ որ փչեն,  
Դեմքը իրաւ ինչո՞ւ վախնայ՝  
Յողմերէն բիրտ, փոթորիկէն..

.....

Շահակեղրոն աշխարհիս մէջ,  
Իրա՛ւ ընկերն անգին գանձ է,  
Շատ ընկերներ կը լքեն քեզ,  
Երբ շահն այդպէս կը պահանջէ..

.....



---

Իրաւ ընկերն սիրտդ կը զգայ,

Դժուար պահուն բովդ կ'ըլլայ,

Խնդութեամբդ կ'ուրախանայ,

Ցաւիդ հետ ալ ընկեր կ'ըլլայ:

.....

Թէ քեզ լքեն ընկերներդ,

Մի՛ վիատիր, ետ կու գան քեզ,

Իսկ թէ չգան, չէին ընկեր,

Դո՛ւն սարքեցիր զիրենք ընկեր...

.....

Աղո՛թք մըն է հոգեպարար,

Երբ կը զրուցես հոգիիդ հետ,

Խոստովանա՛նք մ'է ան անեղծ՝

Խորանին վրայ հաւատարծարծ..

\* \* \*

Մարդ անունով կու գան հանդէս,

Բանաստեղծի հովեր կ'առնեն,

Բայց սիրտերնին երբ թափանցես,

Պուտ մը բարին մոմով փնտռես...

\* \* \*

Չազար բառեր ալ դուն շարես,

Վայելչօրէն ու պերճագեղ,

Թէ քու հոգի՛դ դուն չդնես,

Բառերդ սին են խեցիի պէս..

.....

Մարդիկ ստրուկ միայն կ'ուզեն,

Չլու-հնազանդ կամակատար,



---

Թէ ազա՛տ ես, քեզ չեն ներեր,  
Բայց Բարձրեային դուն մօտենաս..

.....

Անցած պահը կ'երգենք միշտ ալ,  
Մերթ կ'ափսոսանք, մերթ կը տրտմինք,  
Անցնելէն ետք կը վերապրինք  
Ա՛լ յուշ դարձած պահն անուշցած..

.....

Թէ ուրիշը նսեմացնես,  
Դուն ալ աւել նսեմանաս,  
Թէ ուրիշը բարձրացնես,  
Դուն ալ նոյնքան կը բարձրանաս:

.....

Ուժեղ է ան, ով քաջաբար  
Կ'ընդունի թէ սխալած էր,  
Չի փորձեր իր մեղքը կոծկել,  
Կամ զայն բարդել այլոց վրայ:

.....

Թէ կարենաս արհաբար  
Ծշմարտութիւնը ընդունիլ,  
Թէկուզ՝ ըլլայ ան քե՛զ ի վնաս,  
Յայնժամ Մարդ ես, լաւ իմացիր:

.....

Ծակ հերոսներն այնքան շատ են,  
Որոնք իրենց վերելքն փնտռեն՝  
Մեծ-մեծ ու բարձր խօսելով,  
Եւ ուրիշը վար զարնելով..



.....

Խօսուած բառը եթէ մէկն է,

Լռութիւնն է անեզրական,

Չըսուածին մէջ՝ համակ աշխարհն

Կը տնթայ լուռ յաւերժօրէն...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ